Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԻՆ ԱՐՏԱԾԱՏ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

Б. Н. АРАКЕЛЯН

ДРЕВНИЙ АРТАШАТ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

902.6
Ա-70

Բ. Ն. ԱՐԱՔԵԼՅԱՆ

ՀԻՆ ԱՐՏԱՇԱՏ

2118.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

ՀԱՅԿ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

902.6(С48)
Ա 70

Գրքույկը նվիրված է 1971—1973 թթ. Հին Հայաստանի մայրաքաղաք Արտաշատում կատարված պեղումների արդյունքներին: Պեղումների ընթացքում հայտնաբերված հուշարձանները և մեծ քանակությամբ հնագիտական հարուստ նյութերը բացառիկ արժեք են ներկայացնում Հին Հայաստանի պատմության և հայ ժողովրդի դարավոր մշակույթի ուսումնասիրության համար:

Ա 10602 92—75
703(02)—75

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975.

ԱՐՏԱՇԱՏԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

«Այսպիսով, կառուցվեց մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք, որը կոչվեց թագավորի անունով և հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք»:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ

Արտաշատը հիմնադրվեց 180—170 թթ. մ. թ. ա. որպես մայրաքաղաք, բայց նա հայոց առաջին մայրաքաղաքը չէր, ոչ էլ հայկական առաջին պետականության քաղաքական կենտրոնը: Դրանից շուրջ 400 տարի առաջ իր կազմավորումը բոլորող հայ ժողովուրդն ունեցել էր իր անդրանիկ պետականությունը, բայց Հայաստանի հարևաններն ավելի հզոր էին, և Մարաստանը իր գերիշխանությունը հաստատեց առաջին Երվանդունիների հայկական թագավորության վրա: Մեծ էր ազատության ձգտումը, և հայոց թագավորը ապստամբեց: «Ինչո՞ւ այժմ ոչ տուրք ես վճարում, ոչ զորք ես ուղարկում և սկսել ես ամրություններ շինել»,—հարցնում է ահեղ ախոյանը, իշխելու իր իրավունքը տեսնելով ուժի մեջ: «Ես ազատության էի ձգտում, որովհետև լավ էի համարում, որպեսզի թե՛ ինքս ազատ լինեմ, թե՛ որդիներիս ազատություն թողնեմ»,—պատասխանում է հայոց թագավորը:

Մարաստանի գերիշխանությունը երկար չտևեց, քանի որ մարական պետությունն ընկավ, տեղի տալով Աքեմենյան պարսկական տերությանը: Հայերը օգնեցին նոր պետության հիմնադիր Կյուրոսին, հուսալով թեթևացնել իրենց վիճակը,

բայց Կյուրոսը կրկնապատկեց Հայաստանից գանձվող հարկերը։

Օգտվելով Պարսկաստանում առաջացած գահակալական կռիվներից, հայերը այս անգամ ապստամբեցին պարսկական գերիշխանության դեմ, սակայն համառ պայքարը անկախություն չբերեց, իսկ Աքեմենյանների գահին տիրացած Դարեհ I-ը 519 թ. մ. թ. ա. վերացրեց հայկական թագավորությունը։

Հարևան պետությունների հզորությունը մշտնջենական չէր, մինչդեռ հայ ժողովրդի ազատության ձգտումը անմարելի մնաց։ Եվ երբ Աքեմենյան տերությունը թուլացավ ու ընկավ Ալեքսանդր Մակեդոնացու հարվածներից, Հայաստանում իսկույն առաջացան պետական նոր կազմավորումներ՝ Մեծ Հայքում, Ծոփքում, Փոքր Հայքում։ Բավականաչափ զորեղ էր, մանավանդ, Երվանդունիների նոր թագավորությունը, որը սակայն չկարողացավ վերջնականապես միավորել Հայաստանը և մ. թ. ա. III դ. վերջերին ընկավ։

Արտաշեսյան թագավորությունը հանդիսացավ Երվանդունիների հայկական պետության ժառանգորդը, թեև նրա տեղ գրավեց պայքարով ու պատերազմական ընդհարումներով։

III դ. վերջերին մ. թ. ա. Մեծ Հայքի Երվանդունիները և Ծոփքի թագավորությունները ընկան Սելևկյանների տիրապետության ներքո։ Սակայն վերջիններիս տիրապետությունը Հայաստանում կարճատև եղավ։

Հռոմեական զորքերից Սելևկյանների կրած պարտությունից օգտվելով, Մեծ Հայքը և Ծոփքը 189 թ. մ. թ. ա. ապստամբեցին և թոթափեցին Սելևկյանների իշխանությունը։ Ապստամբության ղեկավար Արտաշեսը հռչակվեց Մեծ Հայքի թագավոր, Զարեհը՝ Ծոփքի։ Արտաշես Ա (189—160 թթ. մ. թ. ա.) հայկական հողերը (բացի Ծոփքից) միավորեց մի կայուն և բավականաչափ զորեղ պետության մեջ և հիմնադրեց Արտաշատը իբրև միասնական հայկական պետության մայրաքաղաք։

Ազատագրված Հայաստանը տնտեսական և մշակութային նշանակալից վերելք էր ապրում։ Մովսես Խորենացին գրում է. «Բայց ասում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայոց աշխարհում անմշակ հող չմնաց, ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան շենացել էր երկիրը»[1]։

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը Արտաշես Ա-ի շինարարական գործունեության թագը կազմեց։ Գտնվելով խիտ բնակեցված Արարատյան բարեբեր դաշտում, առևտրական ճանապարհների հանգույցում, Արտաշատը դարձավ ոչ միայն Հայաստանի, այլև Հելլենիստական Արևելքի առավել նշանավոր և հայտնի քաղաքներից մեկը։ Պատահական չէ, որ հայոց մայրաքաղաքի հիմնադրման, մեծության և շքեղության մասին ժամանակին հյուսվել են ավանդություններ և գրի են առնվել ուշագրավ տեղեկություններ։ Հին աշխարհի հռչակավոր աշխարհագետ Ստրաբոնը խոսելով Արտաշատի հիմնադրման մասին, գրում է. «Այս վերջինը գեղեցիկ է շինված և երկրի թագավորանիստ քաղաքն է։ Նա գտնվում է գետածոցում, որը նման է թերակղզու և նրա շուրջը, բացի պարանոցի մասից՝ գետի առջև ձգվում է պարիսպը, իսկ պարանոցը փակված է խրամով և պատվարով»[2]։

II դ. հույն պատմիչ Պլուտարքոսը նույնպես խոսելով Արտաշատի հիմնադրման մասին, ասում է. «Այսպիսով կառուցվեց մեծ ու խիտ գեղեցիկ քաղաք, որն անվանվեց թագավորի անունով և հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք»[3]։

Նոր մայրաքաղաքի հիմնադրումը Արտաշես թագավորի կողմից պատմական նշանակություն ունեցող իրողություն էր, ուստի նրա արձագանքները շուրջ յոթ դար անց հասել են Մովսես Խորենացուն, որն արձանագրել է նաև ավանդաբար պահպանված ինչ-ինչ մանրամասնություններ. «Արտաշատը գտնվում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրին հավանելով քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»։ Ապա Խորենացին պատմում է, որ Արտաշատում մեհյաններ են կառուցվում և այստեղ են փոխադրվում Բագարանից Արտեմիսի (Անահիտի) և

[1] Մովսես Խորենացի, Գիրք 2-րդ, գլ. ԾԶ։
[2] *Strabo*. XI, 14, 6.
[3] *Plut*, lucullus, XXXI, 5.

Թագավորի նախնիների արձանները, իսկ Երվանդաշատ քաղաքից՝ բոլոր վայելչությունները, ինչ Երվանդը տարել էր Արմավիրից և ինչ որ հենց ինքն էր ավելացրել։ Ավելի շատ բան էլ իր կողմից շինելով Արտաշեսը հարդարում է Արտաշատը իբրև արքայանիստ քաղաք[4]։ Արարատյան արգավանդ դաշտի արտերի, այգիների և ծառաստանների առատ բերքը, բազմաթիվ արհեստների արտադրանքը և Մերձավոր Արևելքի միջազգային առևտրի կարևորագույն կենտրոններից մեկը լինելու հանգամանքը նպաստեցին Արտաշատի արագ աճին և շուտով այն դարձավ Հայաստանի խոշորագույն տնտեսական և մշակութային կենտրոնը։ Մեծացավ նաև մայրաքաղաքի վարչա-քաղաքական նշանակությունը։ Արտաշատը դարձավ հայոց աշխարհի սիրտը և հայկական հողերի միավորող կենտրոնի՝ մայրաքաղաքի դերը կատարեց շուրջ 500 տարի։

Արտաշատն ապրեց հին դարաշրջանում հայ ժողովրդին բաժին ընկած պատմական բախտով, որը հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային աշքի ընկնող առաջադիմության հետ միասին նրան բերում էր նաև սեփական պետականությունը և անկախությունը օտարների ոտնձգություններից պաշտպանելու համար և տևական մաքառում, նաև ավեր, կողոպուտ և անկում։

Դեռևս Լուկուլլոսը Արտաշատը համարում էր Հռոմին ընդդիմադիր պետության խոշոր կենտրոն, ինչպես մի ժամանակ Կարթագենն էր և սպառնում էր վերջինիս բախտին արժանացնել, այսինքն՝ հիմնահատակ ավերել «հայկական Կարթագենը»։ Այդ բանը նրան չվիճակվեց, սակայն, 120 տարի անց, մ. թ. 59 թ. գարնանը Արտաշատը ավերեց և հրկիզեց հռոմեական մի այլ զորավար՝ Կորբուլոնը։

Առաջին դարի 60—70-ական թվականներին Արտաշատը վերաշինվեց և շարունակեց խաղալ մայրաքաղաքի իր խոշոր դերը։ 116 թ. հռոմեական զորքերը Տրայանոս կայսեր գլխավորությամբ կրկին գրավեցին Արտաշատը, բայց մի տարի անց ստիպված եղան հեռանալ։

163 թ. հռոմեական զորքերը պաշարում և վերցնում են Արտաշատը։ Նվաճողները մտադիր էին Հայաստանը դարձնել Հռոմի մի նահանգը, սակայն նրանց դեմ այս անգամ էլ ոտքի կանգնեց հայ ժողովուրդը և, ինչպես երևում է, ապստամբության կենտրոնը Արտաշատն էր։

164 թ. մայրաքաղաքը, մասամբ ավերված Արտաշատից, տեղափոխվեց Վաղարշապատ, որն անվանվեց Կայնե Պոլիս՝ Նոր քաղաք։

Արտաշատը այնուամենայնիվ պահպանում էր առաջին մայրաքաղաքի դերը, մինչև նրա շուրջ առաջացած ճահիճների և վատ օդի պատճառով հայոց Խոսրով Կոտակ թագավորը (332—338) իր արքունիքը տեղափոխեց Դվին։

Ինչպես երևում է, դրանից հետո էլ Արտաշատը մնում էր խոշոր քաղաք, բայց հետո նրան սպասում էր մի նոր՝ ծանր, կարելի է ասել, կործանիչ հարված։ 360-ական թվականներին Հայաստան ներխուժեց Սասանյան Իրանի Շապուհ II շահի բանակը, որը գրավեց և ավերեց հայկական քաղաքները, դրանց թվում և Արտաշատը, գերի տանելով նրա բնակիչներին։ V դ. նշանավոր պատմիչ Փավստոս Բուզանդի վկայությամբ պարսից զորքերը «Եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, և դերեցին զամենայն քաղաքն։ Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն եղ հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ Արքայի Արշակունւոյ յերկրէն պաղեստինացւոց և քառասուն հազար երդ հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին։ Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին»։ Քարը քարի վրա չթողեցին և քաղաքը անմարդաբնակ դարձրին, ավելացնում է պատմիչը[5]։

[4] Տե՛ս Մովսես Խորենացի, Գիրք 2-րդ, գլ. ԽԹ։

[5] «Փաւստոս Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1889, էջ 176։

Որքան էլ չափազանցված լինեն պատմիչի նշած թվերը, նրանք վկայում են, որ Արտաշատը IV դ. 60-ական թթ. դեռևս խոշոր քաղաք էր։ Դրանից հետո Արտաշատը անկում էր ապրում, թեև ավանդաբար պահպանում էր միջազգային տարանցիկ առևտրի հանգույցի և պահեստատեղիի հնից եկող նշանակությունը։

VII դ. երբեմնի խոշոր և ծաղկյալ քաղաքի տեղում մնում էր մի փոքր ամրոց և մի ավան, որի բնակիչները զբաղվում էին որդան կարմիր ներկի արտադրությամբ և գրանով թել ու գործվածքներ ներկելու արհեստով։ Այնուհետև Արտաշատը անհետացավ պատմության թատերաբեմից և երկար ժամանակ հայտնի չէր նույնիսկ նրա տեղը։ Մանավանդ Մեծամոր գետը, որը հնում իրոք մեծ գետ էր և, իր մեջ առնելով Մեծամորի (Սևջրի), Քասախի, Հրազդանի և Ազատ գետի ջրերը, Արաքսին միանում էր Արտաշատի մոտ, հետագայում փոխելով իր ընթացքը խառնվում է Արաքսին, միանալով միայն Քասախի հետ, իսկ, ինչպես տեսանք, Խորենացին վկայում է, որ «Արտաշատը գտնվում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են»։

Եվրոպական ճանապարհորդները, ինչպես և Ղևոնդ Ալիշանը և ուրիշներ, Դվինի ավերակները շփոթել են Արտաշատի հետ։ Ն. Յա. Մառը դեռևս 1899 թ. հետախուզական պեղումներ կատարեց Վ. Արտաշատ գյուղի մոտ գտնվող հնավայրի միջնաբերդում, բայց սահմանափակ ծավալի այդ պեղումները հնարավորություն չտվեցին նրան պարզելու՝ Արտաշա՞տն է այդտեղ գտնվել, թե՞ Դվինը։

Արտաշատի տեղը հայտնի է դարձել դեռևս 1920—30-ական թթ., թեև տարակուսանքներ մնում էին։

Հին Հայաստանի քաղաքների ուսումնասիրությունը դեռևս սահմանափակ էր. պեղվում էին միայն Գառնին և Արմավիրը, իսկ Արտաշատի պեղումները կարող էին բազմազան և կարևոր նյութեր երևան բերել հին Հայաստանի պատմության և նյութական մշակույթի մի շարք հարցերի լուսաբանության համար, ուստի դարձել էին անհետաձգելի անհրաժեշտություն։

1967 թ. Արտաշատ հին քաղաքի մոտ Փոքր Վեդի գյուղի ծայրին հայտնաբերված լատիներեն արձանագրությունները[6] տրիթ ծառայեցին ավելի հանգամանորեն ծանոթանալու Արտաշատի տեղանքին, մասամբ էլ մղեցին շուտով ձեռնարկելու հին Հայաստանի փառաբանված մայրաքաղաքի պեղումները, որոնք սկսվեցին 1970 թ. Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախմբի ջանքերով և տևելու են երկար տարիներ։

Ընդամենը երեք տարի է, ինչ պեղումները կատարվում են, տարեկան 2—3 ամիս տևողությամբ, իսկ արդյունքները ավելի քան գոհացուցիչ են։

ԱՐՏԱՇԱՏԻ ՏԵՂԱՆՔԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԸ

Պեղումները նախապատրաստելու նպատակով, սկսած 1967 թ. ամեն տարի կատարվում էին հնագիտական դիտումներ Արտաշատի տեղանքում։ Իսկ 1970 թ. աշխատանքները սկսվելուց առաջ հնագիտական արշավախումբը մի քանի օր շարունակ խմբովին շրջում էր բլրից-բլուր և դաշտից-դաշտ, որոնում հին քաղաքի հետքերը, հողի մակերեսից հավաքում հնագիտական նյութեր հին քաղաքի տեղանքի, գոյության ժամանակաշրջանի կամ տևողության վերաբերյալ ավելի որոշակի պատկերացում կազմելու, ինչպես և պեղման տեղամաս ընտրելու համար։

Պարզվեց, որ քաղաքը տեղադրված է եղել Խորվիրապի բլրախմբի բոլոր բլուրների վրա և նրանց առջև փռված դաշտերում։

---

[6] Բ. Ն. Առաքելյան, *Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից*, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1967, էջ 302—311։ *Б. Н. Аракелян*, Латинские надписи из столицы древней Армении—Арташата. "Вестник древней истории", Москва, 1971, № 4, стр. 114-118.

Բլրախումբը բաղկացած է ինը բլուրներից, որոնցից երեքը մեծ են, երեքը՝ միջին, իսկ երեքը՝ փոքր։ Բոլոր բլուրներն էլ շրջապատված են եղել պարիսպներով։ Բնակության հետքեր նկատելի են նաև գլխավոր բլրախմբից մոտ կես կիլոմետր արևելք գտնվող երկու բլուրների և այլ բարձունքների վրա։

Գլխավոր բլրախմբի հարավ-արևելյան մասում է բարձրանում այն բլուրը, որի վրա մինչև օրս պահպանվում է հին Արտաշատի Խորվիրապ կոչվող հորը, որտեղ նետում էին մահապարտներին և ըստ ավանդության Տրդատ Գ թագավորը այնտեղ է նետել Գրիգոր Լուսավորչին։ Այս բլրի վրա հնում եղել են շենքեր, վաղ միջնադարում՝ եկեղեցի։ XIII դ. այստեղ հիմնադրվել է վանք և բարձր տիպի վանական դրպրոց, որի ուսուցչապետը եղել է բազմահմուտ գիտնական, վարդապետ Վարդան Արևելցին։ Սակայն այդ վանքի հետքերն էլ չեն պահպանվել. այժմ կանգնած են Խորվիրապի XVII դ. կառուցված վանքի շենքերն ու պարիսպը։

Քաղաքի թաղամասերը դեպի հարավ և հարավ-արևելք փռվել են մինչև Արաքսի ափը և մինչև այժմյան Լուսառատ գյուղը։ Դեպի արևելք քաղաքի թաղամասերը նկատվում են Նոր կյանք գյուղի արտերի մեջ, իսկ դեպի հյուսիս և հյուսիս-արևելք՝ Փոքր Վեդի գյուղի արտերի մեջ։ Բլուրներից արևմուտք տարածվում են ճահիճներ, որտեղ բնակության հետքեր չեն նկատվում, միայն կենտրոնական և հարավային բլուրների դիմաց փռված դաշտում նկատվում են ամբարտակի մնացորդներ, իսկ նրանցից ներս բացվեցին մ. թ. առաջին դարերի թաղումներ։

Հյուսիսային և արևելյան կողմում, բլուրների և արհեստական ամբարտակի միջև մինչև այժմ նկատվում է ջրով լցվող պաշտպանական ընդարձակ փոսը (խրամը) (նկ. 2)։ Կենտրոնական բլրի արևելյան ծայրից ամբարտակ է ձգվում նաև դեպի վանքի բլուրը և այժմ այս ամբարտակի վրա տեղավորված է մերձակա գյուղերի գերեզմանոցը։

Ինը բլուրները իրենց լանջերով և փեշերով մինչև արևելյան ամբարտակը և գերեզմանոցը գրավում են ավելի քան

100 հա տարածություն, իսկ դաշտերում փռված թաղամասերը շատ ավելի ընդարձակ տարածություն են գրավել, սակայն քաղաքի սահմանները որոշել այժմ հնարավոր չէ. այն կպարզվի հետագա պեղումներով։

Բլուրներից 400—500 մ. հյուսիս-արևելք, դեպի Փոքր Վեդի գյուղը ձգվող դաշտերում նկատվել են բնակության հետքեր, դրանց թվում կղմինդրով ծածկված տանիքով, որմնանկարներով զարդարված շենքի հետքեր։ Դժվար է ասել, թե քաղաքի թաղամասերը հասել են Փոքր Վեդի գյուղին, որի հարավային ծայրում 1967 թ. գտնվեցին լատիներեն արձանագրություններ, սյուների երկու խարիսխներ (արդեն տեղաշարժված), կրաշաղախով և ծեծած կղմինդրով պատրաստված հատակի բեկորներ, աղորիքներ և անտիկ դարաշրջանի հասարակ և գունազարդ խեցեղենի բեկորներ։ Արձանագրություններից մեկը հռոմեացի զինվորի տապանաքար է, իսկ մյուսի վրա, Տրայանոս կայսեր բազում տիտղոսների թվարկումից հետո ասված է, որ սկյութական IV լեգեոնը կատարեց կամ կառուցեց[7]։ Իսկ ի՞նչ է կառուցել սկյութական լեգեոնը՝ ռազմական ճամբա՞ր, գերեզմա՞նոց, թե՞ մեկը և մյուսը միասին, կամ այլ կառուցվածքներ, առանց պեղումների դժվար է ասել։

Կատարված հնագիտական տեղագրական դիտողությունները թույլ են տալիս պնդելու, որ Արտաշատը եղել է շատ ավելի մեծ քաղաք, քան կարելի է պատկերացնել։ Այն գրավել է ընդարձակ տարածություններ Արաքս գետի ձախ ափին, ուղիղ վեհանիստ Մասի դիմաց։

ՊԱՐՍՊԻ ԵՎ ՇԵՆՔԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ

Վերևում նշվեց, որ պարսպով շրջափակված են եղել Խորվիրապի բոլոր բլուրները, բայց դրանք կառուցվել են ոչ

[7] Բ. Ն. Առաքելյան, նշվ. հոդվ., էջ 308։

թե իրարից անջատ, այլ կազմել են մի միասնական, ընդարձակ և հզոր պաշտպանական համակարգ։ Կողք-կողքի գտնվող կամ կից բլուրներն օղակող պարիսպները միացած են իրար, նրանց միջև գտնվող ցածրադիր մասում կառուցված զուգահեռ պատերով կազմված միջանցքներով։ Պարսպի հետքերը նկատելի են բոլոր բլուրների շուրջ, բայց տեղ-տեղ, նրանք բոլորովին չեն պահպանվել, քայքայվել են անգամ նրանց հիմքերի տակի ժայռերը։ Պարիսպը կառուցված է եղել տեղական կարմրավուն, կարծր, բայց հեղքեր տվող և քայքայվող քարից, օգտագործվել է նաև տեղական մոխրավուն մարմարը, ոչ սրբատաշ, կոպիտ մշակմամբ (նկ. 3)։ Վեմերով շարված են եղել հավանաբար պարսպի հիմքերը, իսկ վերևում թերևս եղել է հում աղյուսի շարվածքը, որի հետքերը երևան եկան հյուսիսային (№ 1) բլրի պարսպի որոշ հատվածներում։

Պարիսպը վարպետորեն հարմարեցված է տեղանքին, մեկ դուրս, մեկ ներս թեքվելով և անկյուններ կազմելով հնարավորություն է ընձեռել՝ թշնամուն հարվածելու և՛ ճակատից, և՛ թևերից, իսկ բլուրների անկյուններում կանգնեցված են եղել կիսաշրջանաձև կամ 2/3 շրջան կազմող աշտարակներ։

Ամենամեծ և բարձրադիր բլրի հյուսիս-արևելյան լանջին պեղումներով բացվեց պարսպի երկու գիծ։ Արտաքին պարսպից, որն ավելի հին, նախնականն է, պահպանվել են լավ մշակված քարերից շարված հիմքերը կանոնավոր հեցապատերով (կոնտրֆորաններով) և անկյունային կիսաշրջան աշտարակով։ Ներքին պարիսպը կառուցված է ավելի ուշ, առաջինին զուգահեռ և երկուսի միջև թողնված է 40—70 սմ նեղ միջանցք։ Ներքին պատը բացված է 2—3 մետր բարձրությամբ և ամբողջովին շարված է հեղքված քարերով։ Այս պատի մեջ տեղ-տեղ հանդիպում են ավելի հին, հավանաբար արդեն ավերված շենքերից վերցված լավ մշակված սրբատաշ քարեր, որմնասյան բեկորներ՝ կրաքարից։

Պարսպի այս հատվածի պեղումների ժամանակ արշավախումբը անակնկալի հանդիպեց։ Հայտնաբերվեցին ուրարտական կարասների, ճրագների և այլ խեցեղենի բեկորներ, իսկ № 1 բլրի վրա գտնվեց նաև ուրարտական կնիք՝ քրմերի կամ աստվածների մաշված և հազիվ նկատելի պատկերներով։

Ուրեմն ուրարտացիները եղել են Արարատյան դաշտի նաև արևելյան հատվածում։ Դա, իհարկե, անսպասելի չէր։ Ուրարտացիները տիրելով Արարատյան արգավանդ դաշտին և մեծամեծ եկամուտներ ստանալով այստեղից, չէին կարող անուշադրության մատնել նրա մի մասը։ Եթե նկատի ունենանք, որ ուրարտական արձանագրությունները գտնվել են Մակվի մոտերքը, հարավային Ադրբեջանում, իսկ հյուսիսում նրանք հայտնի են Սևանա լճի հարավ-արևելյան մասում, ապա բոլորովին էլ զարմանալի չի լինի, եթե մի օր ուրարտացիների հետքերը երևան գան ավելի հարավում, ասենք՝ Նախիջևանի ինքնավար հանրապետության սահմաններում կամ հարևան շրջաններում։

Միանգամայն հաստատ է, որ Խորվիրապի բլուրները չեն վրիպել ուրարտացիների ուշադրությունից, բայց նրանք այստեղ ամրոց կառուցել են, թե ոչ՝ կարող է պարզվել հետագա պեղումներով։ Անկախ այդ հանգամանքից և ավելի ուշ շրջանի երկրորդ պարսպի կամ նրա առանձին հատվածների առկայությունից, Արտաշատի հիմնադրման ժամանակ կանգնեցված հիմնական պարիսպը կառուցված է ամրոցաշինության պահանջների հմուտ կիրառմամբ և աչքի է ընկնում իր ընդարձակությամբ։ Ուշագրավ է, որ հռոմեական պատմիչ Տակիտոսը 59 թվականին Արտաշատի ավերումը և հրկիզումը հռոմեացիների կողմից փորձում է արդարացնել քաղաքի պարիսպների ընդարձակությամբ։

Նա գրում է. «Քաղաքը հրի ճարակ դառնալով հիմնահատակ կործանվեց, որովհետև պարիսպների ընդարձակության պատճառով կարելի չէր պահել այն, առանց պահապանների հզոր գնդի և մենք բավական զորք չունեինք՝ և քաղաքը պահելու, և պատերազմելու համար, իսկ եթե այն կանգուն և անպահապան թողնվեր՝ կկորչեին քաղաքի առ-

ման և փառքը, և օգուտը»[8]։ Տակիտոսը արդյո՞ք այն պարիսպների ընդարձակությունն է նկատի ունեցել, որոնց հետքերը երևում են բլուրների վրա, թե՞ եղել են պարիսպներ նաև հարթավայրում փռված թաղամասերի շուրջը, առայժմ պարզ չէ, թեև Ստրաբոնի հիշատակությամբ քաղաքի շուրջը և գետի առջև ձգված է եղել պարիսպ։

Պարսպի հաստությունը տարբեր մասերում տարբեր է և 2,20 մ հասնում է մինչև 4,80 մետրի։ Հնագետի զննող աչքը, ինչպես պարսպի, նույնպես և շենքերի հիմնապատերի հետքեր կարող է նկատել Խորվիրապի բոլոր բլուրների վրա։ Շենքերի հետքեր տեղ-տեղ երևացին նաև հարթավայրում՝ բլուրներից հարավ և արևելք։

Միայն պեղումները կարող են պարզել շենքերի բնույթը և շինարարական սկզբունքներն ու առանձնահատկությունները, փաստական նյութեր տալ լուսաբանելու հինավուրց քաղաքի կյանքին, կենցաղին և մշակույթին վերաբերող շատ հարցեր։ Այդ նպատակով էլ Արտաշատի հնագիտական արշավախումբը ձեռնարկեց քաղաքի պեղումները, աշխատանքը կենտրոնացնելով առաջին հերթին բլրախմբի հյուսիսային ծայրի (№ 1) բլրի վրա և 1973 թ. ավարտեց նրա համատարած պեղումները։ Բլուրը շրջափակված է ոչ շատ կանոնավոր եռանկյունու տեսք ունեցող պարսպով։ Երեք կողմերից պարսպին հարում են բնակելի սենյակներ և դարբնոց-զինագործական արհեստանոցներ։ Հյուսիս-արևմտյան և հյուսիս արևելյան կողմերում այս կացարանների և արհեստանոցների շարքը ոչ լայն միջանցքով անջատված է ավելի ներս ընկած շենքերից։ Այդ հանգամանքը դյուրացնում էր զինվորների շարժումը պարսպի մի հատվածից մյուսը, իսկ միջանցքից տեղ-տեղ անցում է թողնված դեպի պարսպի աշտարակները և անկյուն կազմող մասերը։ Բլրի հարավ-արևելյան կողմից կացարանների և արհեստանոցների շարքը անմիջապես հենվել է պարսպին և դեպի ներս նրանց մուտքերը բացվել են բակի վրա։ Միանգամայն ակնհայտ է, որ բլուրը կառուցապատվել է միասնական նախագծով։ Բլրի վրա պարզ նկատվում է շինարարական երկու շրջան։ Առաջին շրջանի շենքերը քանդվելուց կամ ավերվելուց հետո, բլուրը կրկին կառուցապատվել է նախկինը հիշեցնող նախագծով, միայն թե միջանցքները փոքր-ինչ ավելի են մոտեցվել պարսպին։

Բոլոր շենքերը կառուցված են տեղական ճեղքված և կոպիտ մշակված, ոչ սրբատաշ քարերով և հավանաբար ունեցել են կավե սվաղ, մանավանդ այստեղ այլ սվաղի հետքեր չեն հայտնաբերվել։ Դարբին զինագործի արհեստանոցներից երկուսը կառուցված են միևնույն նախագծով և ունեն երեք բաժանմունք՝ քուրայի, ընդհանուր սենյակներ և քուրայի սենյակին կից միջանցք՝ հավանաբար վառելիքի համար, միայն բաժանմունքների չափերն են տարբեր։

Ավելի լավ են պահպանվել հյուսիս-արևելյան հատվածի կացարան-սենյակները, որոնց պատերը տեղ-տեղ կանգուն են մնում 2—2,60 մ. բարձրությամբ։ Սենյակներից մեկում գրված է կրաքարից փոքր չափերի երկու խարիսխ՝ հավանաբար փայտյա սյուների համար։

Պարսպին հարող բնակելի սենյակները հատակագծով և կառուցվածքով մեծ մասամբ նման են իրար։ Հավանաբար դրանք եղել են զինվորական կացարաններ (նկ. 5)։

Միջանցքներից ներս ընկնող սենյակներն ավելի ընդարձակ են։ Նրանցից մեկի մեջ տեղադրված էին կարասներ, որոնց մեջ նավթ (մազութ) է լցված եղել։ Ինչպես երևում է, այս բլուրը բնակեցված է եղել զինվորականներով և նրանց ընտանիքներով։

Այս բլրի վրայի կառուցվածքները ավերվել են երկիցս և երկու անգամ էլ հրկիզվել են։ Հրդեհի հետքերը նկատելի են ամենուրեք։ Շենքերի մի մասն ունեցել է հարթ ծածկ, գերանների վրա փռված է եղել եղեգն, որի հետքերը վառված վիճակում պարզ նկատելի են ծածկերի փլվածքների տակ։ Պետք

[8] *Tacit*, Annales, XIII, 41. Օգտվել ենք Ի. Հյուրմուզյանի թարգմանությունից (վերածելով աշխարհաբարի), Վենետիկ, 1873, էջ 367։

ՀԱՅԿ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

է ենթադրել, որ բլրի կառուցվածքները առաջին անգամ թշնամին ավերել է մ. թ. ա. II—I դդ. սահմանագլխին, երկրորդ անգամ՝ մ. թ. 59 թ. գարնանը, երբ Կորբուլոնի գլխավորած հռոմեական լեգեոնները ամբողջապես ավերեցին և հրկիզեցին հայոց մայրաքաղաքը։

1973 թ. ավարտելով № 1 բլրի պեղումները, արշավախումբը աշխատանքները տեղափոխեց բլրախմբի հարավարևմտյան կամ Արաքսի ափին մոտեցող, ծայրի № 8 բլրի վրա։ Այստեղ ևս բացվեցին պարսպի առանձին հատվածների հետքեր և բազմաթիվ շենքերի հիմնապատեր, որոնք դասավորված են պարսպին զուգահեռ ընթացող միջանցք-փողոցի երկու կողմերում, արտաքին շարքով հարելով պարսպին։ Այստեղ նկատելի են շինարարական տարբեր, նույնիսկ երեք-չորս շրջանների հետքերը։ № 8 բլրի վրա ևս կյանքը սկսվել է մ. թ. ա. II դ., քաղաքի հիմնադրման օրից, և ի տարբերություն № 1 բլրի, հարատևել է մինչև IV դ.։ Այլ խոսքով, այս բլրի վրա հայտնաբերված թե՛ ճարտարապետական կառուցվածքները և թե՛ հնագիտական նյութերը վերաբերում են Արտաշատ քաղաքի գոյության համարյա ամբողջ ժամանակաշրջանին և դրանով իսկ մեծ հետաքրքրություն են ներկայացնում։

№ 8 բլրի վրա ևս շինարարությունը կատարված է միասնական նախագծով և միևնույն սկզբունքով, ինչ № 1 բլրի վրա։ Բացված միջանցք-փողոցի երկայնքով երկու կողմերից ձգվում են շենքերի արտաքին պատերը, որոնք մի ամբողջական գիծ են կազմում, իսկ ներսում բացվում են սենյակների բաժանմունքները։ Շինարարական երկրորդ և հետագա շրջանում միջանցք-փողոցի և շենքերի նախնական գծագրի որոշ խախտումներ են նկատելի։ Փողոցի վրա կառուցված է եղել նաև մի բաղնիք՝ տվյալ թաղամասի բնակչության սպասարկման համար։ Այն ունեցել է կրկնակի հատակ և ընդհատակային ջեռուցման սիստեմ։ Վերին աղյուսաշար հատակը փռվել է քառակուսի կտրվածք ունեցող կավե սնամեջ հենակների վրա, որոնց հանդիպակաց երկու կողքերին բացված են փոքրիկ պատուհաններ՝ ջերմ օդի թափանցման համար (նկ. [illegible])։ Բաղնիքը բացվել է շինարարական երրորդ շերտում, ունի անտիկ բաղնիքներին բնորոշ, բայց պարզ կառուցվածք և համանաբար կառուցվել է մ. թ. III դ.։ Այս թվագրությանը չեն հակասում նաև բաղնիքի ներսում ու շուրջը հայտնաբերված խեցեղենը և հնագիտական այլ նյութերը։ Բաղնիքից ոչ հեռու բացվեցին իրար կից չրավազաններ՝ մեկը մեծ, երկուսը փոքր։ Դրանց պատերը կառուցված են կրաշաղախով, որի մեջ ագուցված եղեգնի ցողունների տեղերում պահպանում են ուղղահայաց անցքեր։ Ավազանների հատակներին տրված են եղել թրծած աղյուսներ։ Ինչպես երևում է, ավազանը բաղնիքի հետ կապված չէ։

Արշավախմբի մի ջոկատը պատմական գիտությունների թեկնածու Ժ. Դ. Խաչատրյանի գլխավորությամբ պարսպի և շենքերի հետքեր բացեց նաև հարևան՝ № 7 բլրի վրա, որտեղ նույնպես շինարարական տարբեր շերտերի առկայությունը ակնհայտ է։

Արշավախմբի համարակալմամբ № 2 բլրի վրա, որն ամենամեծն է ու բարձրադիրը, նկատելի են անտիկ դարաշրջանի բազմաթիվ շենքերի հետքեր, որոնց պատերը շարված են տեղական կարմրավուն ճեղքված քարերով։ Սակայն այս բլրի վրա ընդարձակ տարածությամբ թափված են կրաքարի մանր ու մեծ տաշվածքներ, ուստի պետք է ենթադրել, որ այստեղ եղել են սրբատաշ կրաքարից կառուցված գուցե և զարդանախշ նշանավոր շենքեր։ Այդ բանը հաստատող նշաններ էլ կան։ Այստեղ գտնվել է կրաքարից պատրաստված սյան խարիսխ և քիվի բեկոր՝ լավ մշակված և անտիկ շրջանին բնորոշ գեղեցիկ անցումներով։ Բլրի գագաթին ևս համանաբար եղել են աչքի ընկնող շենքեր, սակայն այժմ այստեղ պահպանվում են վաղ միջնադարյան փոքրիկ ամրոցի բավականին հաստ պատերը՝ կրաշաղախ միջուկով և երեսապատման քարերով։ Այս վաղ միջնադարյան ամրոցիկը երբեմնի մեծ և ծաղկյալ քաղաքի կյանքի ավարտին գրված վերջակետն է եղել։

Սրբատաշ կրաքարից կառուցված և սյունազարդ շեն-
քերը, ինչպես երևում է, շատ են եղել Արտաշատում, քան-
որ քաղաքի տարածքի տարբեր մասերում, հին և նոր գե-
ղեցկանոցներում հանդիպում են ավերված շենքերի քարեր
միացման երկաթե գամերի համար արված փոսիկներով, ինչ-
պես և սյուների խարիսխներ (նկ. 8)։ Վերջիններիս չափերի
տարբերությունները վկայում են, որ նրանք ծագում են
տարբեր շենքերից։ Գտնվել են նաև սյուների լավ մշակված
գլաններ (նկ. 9)։ Դրանցից մի քանիսը Արտաշատի հին շեն-
քերի ավերակներից XIX դ. տարվել են Արարատ գյուղը՝ օգ-
տագործելու այստեղ կառուցվող եկեղեցու համար և այժ-
ընկած են այդ եկեղեցու շուրջը, իսկ առանձին մասեր դրված
են եկեղեցու մուտքի առջև և ներսում։ Դրանց՝ անտիկ Արտա-
շատին պատկանելը կասկածից դուրս է, մանավանդ նրանց
վրա պահպանվել են գլանների տարբեր մասերը իրար միաց-
նելու երկաթե գամերի համար արված փոսիկները։ Ան-
տիկ դարաշրջանի ավելի փոքր չափերի սյուների երկու գլա-
և խարիսխների բեկորներ գտնվել են Արտաշատի շրջան
Ազատավան գյուղում։ Այժմյան Արարատ քաղաքի մոտ
հանքերից բերված մանրահատիկ կրաքարը լավ մշակված
հղկված վիճակում իր տեսքով հիշեցնում է մարմարը։ Այդ-
պիսի սպիտակ քարից կառուցված շենքերը շքեղություն էին
հաղորդում քաղաքին։ Շենքերը ունեցել են ճարտարապե-
տական հարդարանք-որմնանկարներ։ Նրանց քանդակների
առայժմ գտնվել է մի փոքրիկ բեկոր։ Շենքերի սենյակներ-
ներսից ունեցել են կրաշաղախից պատրաստված ձևավո-
քիվեր, որոնց տարբեր չափերի նմուշները գտնվել են
Բլուրներից բավականաչափ հեռու՝ հարթավայրում, վարա-
արտի մեջ, մի հին շենքի տեղից հավաքված սվաղի բեկոր-
ները, 7—8 գույնի ներկված, վկայում են, որ շենքերը հար-
դարվել են նաև որմնանկարներով։ Գույներից մանավան-
կարմիրը իր տարբեր երանգավորումներով, նարնջագույնը,
դեղինը, երկնագույնը, սևը, սպիտակը աչքի են ընկնում իր-
րենց հստակ երանգներով։ Պետք է հուսալ, որ հետագայում

կրացվեն որմնանկարների, ինչպես և խճանկարների հետքեր
և նմուշներ։

Շենքերը մասամբ ծածկված են եղել թրծած կավե կղմին-
դրներով, որոնց շատ օրինակներ գտնվել են քաղաքի տար-
բեր մասերում։ Կղմինդրներն ունեն անտիկ դարաշրջանին
բնորոշ ձևավորում, իսկ շատերի արտաքին մակերեսը ծած-
կված է կարմիր ներկով։

Արտաշատը ունեցել է ջրմուղ, որի գծերի կավե խողո-
վակներ գտնվել են անգամ բլուրների վրա։ Առայժմ դժվար
է ասել, թե որտեղից է ջուր բերվել քաղաքը, համենայն
դեպս Արաքսի ջուրը չէր կարող բարձրացվել բլուրների
վրա։

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Արտաշատը գտնվելով Արաքսի և Մեծամորի միացման
մոտ, երկու գետերի միջև ընկած տարածքում, պաշտպան-
ված է եղել ջրային հզոր պատնեշներով։ Արաքսի վրա նետ-
ված Տափերական կոչվող կամուրջը գտնվում էր անմիջա-
պես քաղաքի առջև և հավանաբար քաղաքի պարսպից
դարբասը բացվում էր նրա վրա և այստեղից մայր ճանա-
պարհը տանում էր հարավ-արևմուտք՝ դեպի Տիգրանակերտ։
Մեծամորի վրա նետված կամրջից սկիզբ առնող ճանա-
պարհը հյուսիս-արևմտյան ուղղությամբ տանում էր դեպի
Վաղարշապատ, իսկ հարավ-արևելյան ուղղությամբ՝ դեպի
Իրան։

Գետերով պաշտպանված լինելով հանդերձ, ինչպես նշ-
վեց, քաղաքն ուներ պաշտպանության արհեստական հզոր
համակարգ, բաղկացած ընդարձակ պարիսպներից, ջրով
լցված փոսից և ամբարտակներից։

Քաղաքի պաշտպանները գործադրել են ժամանակի
համար բնորոշ բոլոր միջոցները՝ նետ-աղեղ, տեգ (նետվող
փոքր նիզակ), քարնետ մեքենա (բաղիստր կամ կատա-

պուլտ), պարսատիկ։ Արտաշատում, դրսից, պարսպի տա
հայտնաբերված են մեծ քանակությամբ և տարբեր չափսի կլոր
քարեր, որոնց մի մասը հավանաբար օգտագործվել է քարնետ
մեքենայով, ձեռքով և պարսատիկով թշնամու վրա նետելու
համար[9]։ Պարսպին ներսից հարող սենյակներում ևս գտնվել
են միանգամայն կլոր և ավելի խոշոր քարեր, որոնք անկա
կած բազիստրի ոմբաքարեր են եղել (նկ. 10)։

Քաղաքի պարսպին մոտեցող թշնամու զինվորների
պաշարողական մեքենաների վրա նետվել են նավթի (մազու
թի) մեջ թաթախված բոցավառվող լաթեր։ Այդ առթի
վկայություն է պահպանել հռոմեական պատմիչ Դիոն Կա
սիոսը (մոտ. 155—235 թթ.), ճիշտ է՝ ոչ թե Արտաշատի, այ
Տիգրանակերտի վերաբերյալ։ Նա պատմում է, որ երբ Լու
կուլլոսը պաշարեց Տիգրանակերտը, Տիգրան Արմենը մեծա
մեծ վնասներ պատճառեց նրան նետաձգությամբ և պաշա
պանական մեքենաների վրա նավթ (նավթա) նետելով, որ
բոցավառվում էր այնպես, որ այրում էր այն ամենը, ինչ
կպչում էր և հանգցնելը հեշտ չէր[10]։

Ուշագրավ է, որ № 1 բլրի վրա պեղումների ժամանակ
պարսպի տակ ներսից մի քանի տեղով գտնվեցին նավթ
(մազութի) չորացած գանգվածներ, իսկ սենյակներից մեկու
գետեղված կարասների մեջ լցված է եղել նավթ։

Քաղաք թափանցած թշնամու հեծելազորի դեմ գործած
վել են նաև երկաթե «փշեր», դրանք նետասլաքի ծայրեր
չափի սուր ծայրերով, եռաճյուղ և քառաճյուղ «փշեր» էին
որոնք թափվում էին փողոցներում և ինչպես էլ ընկնեին՝ մ
ծայրը ցցված էր լինում և թշնամու հեծելազորը անցնելի
«փշերը» մտնում էին ձիերի ոտքերը և շարքից հանու
նրանց։

[9] Պեղումների ժամանակ նկատվել է, որ կլոր քարերը պարիսպներ
տակ դրսից երբեմն շարված են շատ կանոնավոր ձևով, ուստի չի բացա
վում, որ նրանք ունենային և այլ, օրինակ, թեք լանջի վրա կառուցվա
պատերի հիմքերը ամրացնելու, ողողումներից և հողմնահարումնե
պաշտպանելու նշանակություն։

[10] *Dio Cassius*, XXXVI, 1.

№ 1 բլրի պեղումների ժամանակ զինագործական արհեստանոցներում նետասլաքների հետ միասին գտնվել են նաև այդպիսի երկաթե «փշեր»։

Նետասլաքների ծայրերը № 1 բլրի վրա, զինագործական արհեստանոցներում, զինվորական կացարաններում հայտնաբերվել են մեծ քանակությամբ։ Մի դեպքում էլ զինվորների շարժման համար թողնված միջանցքում դրված է եղել 1700-ի չափ նետասլաք, հավանաբար որպեսզի զինվորները դյուրությամբ կարողանան օգտագործել պարսպին մոտեցող թշնամու դեմ։ Առաջացած հրդեհից նետասլաքների փայտյա կոթերը վառվել էին, իսկ երկաթե ծայրերը մեծ կույտերով մնում էին տեղում։

Հայտնաբերված շուրջ 3000 նետասլաքները արտադրվել են տեղում և չափերով ու ձևերով ինչպես և թշնամու դեմ գործադրելու առանձնահատկություններով իրարից տարբերվում են։ Նրանց թվում կան երկթև, եռաթև, ետ կախվող սուր եզրերով, քառանիստ՝ կտրվածքով քառակուսի կամ քառանկյունի, տափակ, բայց ուռուցիկ կողքերով (ձվածիր կտրվածքով), կլոր-երկարուկ՝ շատ սրածայր (զրահ ծակելու համար գործադրվող), համարյա գնդաձև, համեմատաբար բութ ծայրով նետասլաքի ծայրեր, որոնց մանրակրկիտ ուսումնասիրությունը արժանի է հատուկ ուշադրության։

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև երկաթե սրեր, նիզակների, տեգերի ծայրեր, դաշույններ և դանակներ։

ՄԱՐՄԱՐԵ ԱՐՁԱՆ

Արտաշատի 1971 թ. պեղումների առավել նշանակալից արդյունքներից մեկը եղավ մարմարե արձանի հայտնաբերումը։ Այն բացվեց № 1 բլրի կենտրոնական մասի սենյակներից մեկում պատի տակ թեք ընկած վիճակում։ Պակասում է արձանի գլուխը և աջ թևը, ինչպես և ձախ թևի դաստակը։

Արձանը կանգնած է շատ ցածրադիր պատվանդանի վրա և ունի 57 սմ բարձրություն (առանց գլխի)։ Խիտոնը (բարակ շապիկ) նեղ գոտիով պրկված կրծքի տակ, այնչափ նրբին է քանդակված, որ չի թաքցնում կանացի մարմնի գեղեցկությունը։ Մարմնին փաթաթված շորը՝ (ἱμάτιον) նետված ձախ թևին, մի ծայրով իջնում է մինչև պատվանդանը՝ կազմելով խոշոր ուղղահայաց ծալքեր, իսկ մյուս ծայրը փաթաթվելով կոնքերին՝ ընկնում է ոտքերին շքեղ ծալքերով։ Խիտոնը մեջքի կողմից ակոսված է ուղղահայաց, խիտ և ոչ խոր ծալքերով (նկ. 11)։

Աջ ձեռքը բարձրացված է եղել դեպի վեր և հավանաբար ինչ-որ բան է բռնած եղել։ Ձախ ուսը, որից սահել է շապիկը, նկատելիորեն ցած է հակված, գլուխը ընդհակառակը՝ թեքված է եղել դեպի վեր, աջ ոտքի ծունկը թեթևակի ծալված է։ Այս ամենը արձանին հաղորդում է նազանք և նրբագեղություն, որոնք բնորոշ են ավելի Աֆրոդիտեի արձաններին։

Արտաշատի մարմարե արձանի ոճական այս առանձնահատկությունները բնութագրում են նրան իբրև մեկը ուշ հելլենիստական ոչ մեծ չափերի այն արձաններից, որոնք պատկերում են զգեստավորված դեռատի աղջիկների, որոնց քանդակագործները ձգտել են վերարտադրել հույն հանճարեղ քանդակագործ Պրաքսիտելի և նրա դպրոցի դասական ստեղծագործությունների նրբին ու շքեղ կերպարները։ Այս խմբին պատկանող երկու արձան գտնվել են Հոդոս կղզում և պահվում են Բրիտանական թանգարանում[11] (Լոնդոն), մեկը՝ Աթենքում և պահվում է տեղի ազգային թանգարանում, իսկ շորրորդը հայտնաբերվել է Փոքր Ասիայում՝ Բութանիայում[12] և

[11] *M. Bieber*, The Sculpture of the Hellenistic age, New Jork, 1955, էջ 144, նկ. 609, 610, *J. Marcade*, Au Musèe de Dalos, Etudè sur la Sculpture Hellenistque en ronde bosse, decouverte dans l'ile, Paris, 1969, ալբոմ XXXII-XXXV, *R. Horn*, Stehende weibliche Gevandstatuen der hellenissrshen Plastik (*Romische Mitteitnngen.), 1931, Erganzungsheft II, էջ 89—90։

[12] *Bieber*, նշվ. աշխ., էջ 166, նկ. 710—712։

ժամանակով ամենաուշը լինելով, արվեստով էլ զիջում է մյուսներին։ Մասնագետների կարծիքով արձանների խումբը պատկերում է Արտեմիսին կամ ավելի շուտ Աֆրոդիտեին և զուրկ չէ էգեյան ծովի կղզիների և Փոքր Ասիայի քանդակագործական արվեստին բնորոշ գծերից[13]։

Արտաշատի արձանը ավելի մոտ է Աթենքում պահվող օրինակին, բայց արվեստով ավելի բարձր է նրանից, մանավանդ Բութանիայում գտնվածից։ Նրբագեղությունը, մանավանդ շեշտված գեղեցիկ կեցվածքը Արտաշատի արձանին հաղորդում են որոշ սեթևեթանք, նազանք, որը նույնպես բնորոշ է ուշ հելլենիստական դարաշրջանի արվեստին։ Այսպիսով Արտաշատի մարմարե արձանը իր ոճական առանձնահատկություններով հանդիսանում է մ. թ. ա. II դ. վերջերի և I դ. սկզբների ուշ հելլենիստական քանդակագործության աչքի ընկնող ստեղծագործություն[14]։

Նույն № 1 բլրի վրա, այս արձանից ոչ հեռու, գտնվել է նաև մարմարե մի այլ, ավելի փոքր չափերի արձանի ոտքի թաթը՝ պատվանդանի բեկորի վրա։

ՔԱՐԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՍԱՐՔԵՐ

Արտաշատում հայտնաբերվել են քարե սարքեր-հարմարանքներ, իրեր և առարկաներ, որոնք կիրառություն են ունեցել բնակչության տնտեսության մեջ և կենցաղում։

Ամենատարածված քարե սարք-հարմարանքները աղորիքներ էին, որոնք օգտագործվել են հացահատիկներից ալյուր, ձավար աղալու համար։ Քարե աղորիքները շատ երկարկյանք և պատմություն են ունեցել։ Ամենապարզ աղորիքները, պատրաստված խոշորահատիկ կամ շեչոտ որձաքարից (բազալտից) և բաղկացած տակի ավելի խոշոր սալաքարից

[13] Նույն տեղում, էջ 165։

[14] *L. Alscher*, Griechische Plastik, հատոր IV, Hellenismus, Berlin, 1957, նկ. 59։

ու վրայի ավելի փոքր քարից, որը երկու ձեռքով տարուբերելով սալի երեսին լցված հացահատիկների վրա տրորում, աղում էր, օգտագործվել է հազարամյակներ շարունակ՝ մինչև մ. թ. ա. IV—III դդ.։

IV—II դդ. աղորիքի վերին քարի վրա ակոս է փորվել ծայրերին փոսիկներ և նրա վրա ամրացվել է փայտե լծակ, որի օգնությամբ պտտեցվել է կիսաշրջանաձև։ Լծակի օգտագործումը թույլ է տվել մեծացնել աղորիքի և՛ տակի, և՛ վրայի քարերը, որոնք այնուհետև ընդունել են քառակուսի տեսք, իսկ վերին քարի լծակի կողքից ճեղք կամ ձվածիր անցք է բացվել հացահատիկը լցնելու համար, բայց լծակը դեռևս հորիզոնական լինելու պատճառով վերին քարը կարող էր պտտվել աջ ու ձախ տարուբերվելով միայն կիսաշրջան։

Ի վերջո աղորիքի քարերն ընդունել են շրջանաձև սալերի տեսք (նկ. 12), տակի քարի կենտրոնում ամրացվել է մետաղե առանցք, հորիզոնական լծակը փոխարինվել է վերին քարի եզրին ամրացվող ուղղահայաց բռնակով և այժմ աղորիքը կարելի էր պտտեցնել շրջանաձև պտույտներով։ Այսպես, հելլենիստական դարաշրջանում առաջացավ նոր տիպի աղորիք-երկանքը, որը մինչև մեր օրերը պահպանվում է գյուղերում։

Գառնիի, Արմավիրի և Արտաշատի պեղումների ժամանակ հայտնաբերվել են աղորիքի անցումային բոլոր ձևերը, ինչպես և երկանքի բազմաթիվ օրինակներ։

Առանցքի շուրջ պտտվող աղորիք-երկանքի ստեղծումը հեղաշրջում առաջացրեց աղալու տեխնիկայի մեջ և ուղի հարթեց ջրաղացի առաջացման համար։ Ինքնին հասկանալի է, որ մինչև երկանքի առաջացումը, որը տեղի ունեցավ III—II դդ. մ. թ. ա., խոսք անգամ չի կարող լինել ոչ միայն ջրաղացի, այլև կենդանիների ուժով պտտվող աղացի մասին, որը նախորդել է ջրաղացին։ Ուշագրավ է, որ կենդանիների ուժով պտտեցվող բավականաչափ խոշոր չափսերի երկանքները դեռևս հելլենիստական կամ անտիկ դարաշրջանում օգտագործվել են նաև ոսկու հանքերում՝ հանքաքարը աղալու,

ապա լվանալու, ոսկին անջատելու համար։ Հին դարաշրջանի նման աղորիքներ գտնվել են Զոդի ոսկու հանքերում և այլ հանքավայրերում։

Աղորիքների նման հին են նաև քարե սանդերը։ Հազարամյակներ առաջ օգտագործվել են փոքրիկ շարժական սանդեր։ Հետագայում սանդեր փորել են բնակավայրի շրջականերում, տների առջև գտնվող ժայռերի վրա, ինչպես և այդ նպատակով օգտագործվել են բազալտե տարբեր չափերի, սովորաբար խոշոր քարեր, որոնք կարող էին շարժական լինել կամ գրվել տների բակերում մի որոշակի տեղում։ Անտիկ դարաշրջանի այդպիսի մի սանդ գտնվել է Արտաշատում։ Սանդերը ունեցել են լայն կիրառություն և օգտագործվել են տարբեր նպատակներով, ինչպես տնտեսության և արհեստային արտադրության մեջ, նույնպես և կենցաղում։

Քարից պատրաստում էին նաև մեծ ու փոքր տաշտեր, վազաներ, սկահակներ, պնակներ, թասեր, ափսեներ (նկ. 13)։

Բազալտե տաշտեր, վազաներ հայտնաբերվել են Կարմիր բլուրում և ուրարտական այլ բնակավայրերում, ինչպես և Արմավիրում, Գառնիում և Արտաշատում։ Հելլենիստական կամ անտիկ դարաշրջանում քարե վազաները լինում են տարբեր ձևի՝ բոլորակ, մակույկաձև և սովորաբար ունենում են ունկեր կամ բռնակներ, իսկ պնակները և թասերը զուրկ են դրանցից։ Բազալտից և կրաքարից պատրաստված նման վազաներ, պնակների և թասերի մի քանի օրինակներ գտնվել են նաև Արտաշատում։

Ավելի խնամքով և բարձր արվեստով էին պատրաստվում քարե սկահակները, որոնց համար ընտրում էին նաև բարձր որակի գունավոր քարեր՝ օձաքար (սերպենտին), պորֆիր, պորֆիրիտ և այլն։ Դրանք պատրաստվում էին հին արևելյան կավե սկահակների օրինակով, բավականաչափ բարձր ոճի վրա։ Այդպիսի բազմաթիվ սկահակներ գտնվել են Աքեմենյան Իրանի Պերսեպոլիս նշանավոր մայրաքաղաքում[15]։

15 *E. Schmidt*, Persepolis II, Chicago, 1957, էջ. 57—58։

Հայաստանում ևս նման սկահակներ և դրանց բեկորները գտնվել են Գեղարդում, Արմավիրում, Արտաշատում և այլուր։ Հայաստանում գտնված սկահակների ոտքերը շատ բարձր չեն, իսկ շուրթերն ունենում են դեպի դուրս թեքվող ձևավոր պսակներ, որոնք բնութագրական են ավելի ուշ ժամանակների՝ մ. թ. ա. III—I դդ. համար։ Գտնված բոլոր օրինակները լավ հղկած, փայլեցրած են։

Արտաշատում գտնվել է նաև մ. թ. ա. II—I դդ. լազուրիտից պատրաստված գեղեցիկ ձևավորումով մի ափսե, որի շքեղությունն ընդգծելու համար շուրթերին արված անցքերի մեջ ագուցված են ոսկյա բարակ ձողիկներ։ Ափսոս, որ ափսեն ջարդված է, թերի և նրա կոնակին փորագրված արամեերեն արձանագրությունը, նույնպես թերի լինելով, լավ չի ընթերցվում, բովանդակությունը չի պարզվում։

Արտաշատում հայտնաբերվել են նաև մարմարից պատրաստված մի քանի գեղեցիկ անոթների մասերը։ Պարզ երևում է, որ դրանք ներսից մշակված են շաղափման եղանակով։ Թվում է, թե դրանք դրսից ներմուծված իրեր են, սակայն հարցի վերջնական լուծումը հնարավոր կլինի հետագա պեղումների շնորհիվ։

Հնում հայտնի են եղել Հայաստանի սրաքարերը, որոնք նույնիսկ արտահանվել են երկրից դուրս՝ Հռոմ։ Սրաքարերն օգտագործվում էին կտրող գործիքները, զենքերը, դանակները սրելու համար։ Պտտվող անիվի (ճախարակի) վրա ամրացրած՝ նրանք ծառայել են նաև հաստ պատերով ապակյա անոթները տաշելով զարդարելու նպատակին։

Պատահական չէ, որ սրաքարեր գտնվում են Հայաստանի բոլոր հնավայրերի պեղումների ժամանակ։ Հաճախ դրանք սաստիկ մաշված են լինում, որպիսի օրինակներ Արտաշատի պեղումների ժամանակ ևս գտնվել են։

Քարերից պատրաստել են նաև թեշիկի գլուխներ, իսկ մարմարից, հասպիսից, մերգելներից՝ նաև ճարմանդներ՝ թիկնոցի ծայրերը ուսի վրա կոճկելու համար։ Ինչ վերաբերում է սարդիոնից, ագատից և այլ կիսաթանկագին քարերից պատրաստվող ուլունքներին, ապա դրանք սովորական էին ու տարածված։

ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Վերևում նշվեց, որ պեղումների ժամանակ բացվել են դարբին-զինագործների մետաղագործական արհեստանոցներ, որտեղ պատրաստված զենքերի մասին ևս համառոտակի խոսվեց, քաղաքի պաշտպանության կապակցությամբ։ Այստեղ կարելի է ավելացնել, որ թշնամուն ոչնչացնելու կամ խոցելու զենքերից բացի եղել են նաև սեփական զորքը, զինվորի անձը և նրա մարտական ձին պաշտպանելու միջոցներ՝ վահաններ, զրահներ, մարդկանց և ձիերի համար։ Փաստեր չկան, թե Հայաստանում երբևէ գործածվել են միջնադարյան Եվրոպայի հեծյալների ամբողջ մարմինը ոտից գլուխ ծածկող կամ նրանց ձիերի մարմինը ծածկող դանգվածային զրահներ, բայց թեթև զրահներ և պաշտպանական սովորական միջոցներ՝ վահան, սաղավարտ, մարտական ձիու գլուխը թշնամու հարվածներից պաշտպանող մետաղե թերթիկներ և այլն հայտնի են տարբեր դարաշրջաններից։

Արտաշատում հայտնաբերվել են պղնձե և բրոնզե շրջանակներ, որոնք կոպիտ գործվածքից կամ կաշվից կարած վերնաշապիկի վրա ամրացվելով ծառայել են իբրև զրահի մաս կամ եղել են վահանի կենտրոնական մասի շրջանակներ (ումբոն), իսկ որոշակի ձև ունեցող երկաթե թիթեղները թվում է, թե օգտագործվել են մարտական ձիերի ճակատը թշնամու հարվածներից պաշտպանելու համար։

Հայտնաբերված մետաղե գործիքների թիվը փոքր է՝ երկու կացին՝ շատ քայքայված, դուր, բրիչ, մանգաղ, այգեգործի դանակ՝ կեռ կտրիչով, բրոնզե ոսկերչական մուրճիկ։ Բրոնզից է պատրաստված նաև № 1 բլրի վրա գտնված գահույքի ոտքի մասը։ Գահույքի կամ աշտանակի մաս կարող է

լինել նաև նույն տեղում գտնված երկաթե ձողը, որը պատած է արծաթե բարակ թիթեղով։ Պղնձից և բրոնզից պատրաստված են եղել կաթսաներ և այլ անոթներ։ Գտնվել է դրանցից մեկի կանթը, որի մի ծայրը ձևավորված է իբրև գաղանի կամ հրեշի գլուխ։

Երևան են եկել նաև մի քանի կավե փոքրիկ հալոցներ, որոնք օգտագործվել են հավանաբար պղնձյա, ոսկյա և արծաթյա իրեր, առարկաներ, զարդեր պատրաստելու նպատակով մետաղ ձուլելու համար։

Զուլածո իրեր, պատրաստված բարձր արվեստով, նույնպես գտնվել են։ Արվեստի աչքի ընկնող ստեղծագործություն է արծաթից ձուլված այծի արձանիկը, որը կարող է թվագրվել ոչ ուշ քան II դարով մ. թ. ա. (նկ. 14)։

Արծաթից են ձուլված նաև խոշոր վազաների կամ այլ անոթների կանթերը, որոնցից մեկը ցածի՝ ծաղիկի տեսք ունեցող ծայրով կպցված է եղել անոթի կողքին, իսկ մյուս ծայրը ուղղահայաց բարձրացել է վեր, ավարտվելով հունական առասպելաբանության մեջ հայտնի սիրո աստված, թռչունի թևեր ունեցող մանուկ Ամուրի փոքրիկ արձանիկով (նկ. 15)։ Մյուս կանթը դարձյալ արծաթից, անոթի վրա ամրացված է եղել հորիզոնական ձևով։ Նրա մի ծայրը ձիու գլուխ է պատկերում, իսկ մարմինը և մյուս ծայրը ձկան է։ Ամբողջ կանթը ոսկեզօծված է եղել։ Դա նույնպես կապված է հունական առասպելաբանության հետ և ներկայացնում է հիպոկամպի՝ ծովաձիուկի պատկեր, բնորոշ ոճավորմամբ (նկ. 16)։ Այս իրերը տեղո՞ւմ են պատրաստվել, թե՞ բերվել են դրսից, կարելի կլինի պարզել հետագա ուսումնասիրություններով։ Բայց նրանք համապատասխանել են տեղական վերնախավի ճաշակին և գործածվել են նրա կենցաղում կամ նվիրաբերված են եղել Արտաշատի տաճարներից մեկին և օգտագործվել են պաշտամունքային արարողությունների և խրախճանքների ժամանակ։

Մեկ թե մյուս դեպքում նրանք Հայաստանում արմատավորվող հելլենիստական մշակույթի հուշարձաններ են։ Բրոնզե

անոթի կանթը հրեշի գլխով, դրանց հակառակը, ավելի տեղական՝ արևելյան բնույթ ունի (նկ. 17)։

Արտաշատում գտնվել են արծաթից պատրաստված գդալիկ, պայտաձև կամ կիսալուսնաձև կախիկ, ինչպես և արծաթի անմշակ ձուլվածքներ, որոնք, հայտնաբերված հալոցների մետաղական խարամների հետ միասին, վկայում են արծաթագործության, նաև ոսկերչության առկայությունը տեղում։ Ի դեպ, ոսկյա պսակի մասեր ևս գտնվել են և անկասկած տեղում են պատրաստվել։ Պսակի վրա եղել են խաղողի տերևներ հիշեցնող, բայց ավելի շուտ սոսիների տեսակին պատկանող կաղամախի ծառի տերևներ, եզրերի խորը կտրվածքներով և սղոցանման ատամներով։ Գտնվել են 22 այդպիսի տերևներ, իսկ շորսն էլ նման են ձիթենու տերևների (նկ. 18)։ Բոլորն էլ թղթի պես բարակ են և փափուկ։ Դրանք գրված են եղել որեէ հարուստ դամբարանո՞ւմ, պսակե՞լ են որևէ արձանի գլուխը, թե՞ նոր միայն պատրաստված են եղել տեղի ոսկերչական արհեստանոցներից մեկում՝ դժվար է ասել։ Բայց ակնհայտ է, որ կողոպտվել են և կողոպտողը հափշտակելով տերևները սեղմել է երկու բռի մեջ, գունդ արել, բայց ինչ-որ դիպվածքով չի տարել, և արշավախումբը գտավ № 1 բլրի վրա, սենյակներից մեկի մեջ, հողի մակերեսային շերտում։

Արտաշատում հայտնաբերված մետաղե իրերն ու զարդերը դրսևորում են հայոց պատմության և մշակույթի զարգացման համար բնորոշ իրողություններ։ Դրանց մի մասը փոխակերպվելով հանդերձ շարունակում է տեղական մշակույթի ավանդույթները, իսկ մյուսները ցայտուն կերպով վկայում են, որ Հայաստանում խոր արմատներ էր գցել և զարգացման բարձր մակարդակի էր հասել տեղական հելլենիստական մշակույթը։

ԽԵՅՏԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես մյուս հնավայրերում, Արտաշատում ևս պեղումների ընթացքում հայտնաբերվող ամենաառատ նյութը

խեցեղենն է։ Դա ինքնին հասկանալի է, քանի որ խեցեղենը հնում ունեցել է չափազանց լայն կիրառություն բնակչության տնտեսության մեջ, մանավանդ կենցաղում, և ինչպես տեսանք, մասամբ էլ շինարարության մեջ (աղյուս, կղմինդրներ, փողրակներ և այլն)։ Արտաշատի տնտեսական և կենցաղային բնույթի խեցեղենը շատ բազմազան է։ Ամենից առաջ՝ սկսած փոքրիկ ձիթաճրագներից մինչև հսկայական կարասները՝ ջրամաններ, շոր և հեղուկ նյութեր ու մթերքներ պահելու տարբեր տեսակի և չափի անոթներ, խոհանոցային կճուճներ և այլ անոթներ, սեղանի սպասք, պնակներ, ափսեներ, թասեր, գավաթներ, զանազան տաշտեր, կավե սարկոֆագներ և այլն։

Ամենից առաջ նշենք, որ Արտաշատում հայտնաբերվող խեցեղենը պատրաստվել է ոչ թե տնայնագործական եղանակով, այլ արտադրվել է քաղաքի խեցեգործական արհեստանոցներում՝ բրուտի ճախարակի (դուրգի) օգնությամբ, իբրև քաղաքային արհեստավորական արտադրանք և սովորաբար շուկա է հանվել վաճառքի։ Պատահական չէ, որ խեցեղեն թրծելու հնոց բացվել է նույնիսկ քաղաքի պարիսպներից ներս, թաղամասերից մեկում՝ № 8 բլրի վրա։ Կավագործ վարպետները (բրուտները) օգտագործել են դարերով ձեռք բերված փորձը և հնարանքները, ինչպես խեցեղենի արտադրության, նույնպես և հարդացման բնագավառում։

Վարպետներն, ըստ արտադրվելիք խեցեղենի տեսակների, նախապատրաստել են տարբեր որակի կավեր՝ մեծ խնամքով մշակված մանրահատիկ կավից սկսած մինչև ավազի զգալի խառնուրդով խոշորահատիկ կավերը։ Խեցեղեն անոթներն ու իրերը շորացնելուց հետո սովորաբար կոկել են քարի կոկիչներով, մակերեսը ծածկել են տարբեր գույնի կավերից պատրաստած նուրբ շերտով և նորից են կոկել փայլեցրել։

Երբեմն անոթները կոկել են նաև թրծելուց հետո։ Անոթների վրա զարդեր արվել են տարբեր եղանակներով, բայց ամենից ավելի նկարազարդմամբ. անոթների լավ մշակված

և սովորաբար գունավոր մակերեսներին մեկ կամ մի քանի գույնով նկարել են տարբեր զարդեր և պատկերներ։

Կավե անոթների գունազարդումը նոր երևույթ չէր, ոչ էլ անցողիկ։ Մարդիկ սկսել են այն կիրառել դեռևս հնագույն ժամանակներում տարբեր վայրերում ու երկրներում և մինչև մեր օրերն էլ երբեք չեն հրաժարվել նրանից։ Սակայն մշտապես փոփոխվել են ինչպես նկարազարդվող անոթների նյութն ու նրանց մշակման եղանակները, անոթների տեսակներն ու ձևերը, արտադրության տեխնիկան, նույնպես և նկարազարդման եղանակները, մանավանդ պատկերներն ու զարդերը իրենց, թե՛ ձևերով և արտահայտությամբ, և թե՛ իմաստով՝ բովանդակությամբ։ Թեև զարգացումը տեղի է ունեցել պատմական հաջորդականությամբ և սովորաբար չի խզվել կապը նախորդ դարաշրջանի հետ, սակայն ամեն մի դարաշրջանի համար բնորոշ է խեցեղենի արտադրության և հարդարման, մասնավորապես գունազարդման ձևերի, հնարանքների, տեխնիկայի, զարդաձևերի. մոտիվների, ինչպես և նրանց վերաբերյալ պատկերացումների, իմաստավորման մի ամբողջ համակարգ, որով մի դարաշրջանի խեցեղենը, տվյալ դեպքում գունազարդ խեցեղենը, տարբերվել է նախորդ և հաջորդ դարաշրջանների խեցեղենից։ Այդ տարբերությունները ակնհայտ են ոչ միայն տարբեր դարաշրջաններում, այլև տարբեր երկրներում կամ էթնիկ տարբեր խմբերի արտադրած խեցեղենի միջև։ Բացի այդ գունազարդ խեցեղենը, ինչպես և մշակույթի, արվեստի տարբեր բնագավառներն ու հուշարձանները, ունեցել է լայն կամ նվազ տարածում, զարգացման տարբեր դրսևորումներ ու մակարդակ, ոչ միայն տարբեր դարաշրջաններում, այլև զանազան ժողովուրդների մոտ։

Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերը սկսել են գունազարդ խեցեղեն պատրաստել դեռևս մեզանից շուրջ վեց հազար տարի առաջ, սակայն այդ խեցեղենի զարգացումը համաչափ չի ընթացել։ Նախքան մ. թ. III հազարամյակում նրա արտադրությունը ընդհատվելու չափ նվազել էր, իսկ II

հազարամյակի առաջին կեսին լայն տարածում է ստացել առաջացնելով հարուստ ձևեր և զարդեր, որոնց թվում հաճախ են հանդիպում, ոչ միայն երկրաչափական ձևեր, այլև կենդանիների և թռչունների պատկերներ։

Երկրորդ հազարամյակի երկրորդ կեսին գունազարդ խեցեղենի արտադրությունը և՛ փոխակերպվում, և պակասում է, իսկ առաջին հազարամյակի առաջին կեսին, այսինքն՝ ուրարտական դարաշրջանում առավել ևս նվազում է։ Մինչդեռ հարևան երկրներում, մասնավորապես Փոքր Ասիայում (Փոքր Ասիա) նույն այդ ժամանակներում գունազարդ խեցեղենի արտադրությունը իր ծաղկումն էր ապրում։

Գունազարդ խեցեղենի արտադրությունը Հայաստանում նոր վերելք է ապրում վաղ հայկական ժամանակներում VI—IV դդ. և լայնորեն տարածվում ու բարձր զարգացման հասնում հելլենիստական դարաշրջանում՝ III—I դդ., երևան բերելով երկրաչափական, բուսական երբեմն նաև կենդանական հարուստ ու բազմազան զարդեր և զարդաձևեր[16]։ Մ. թ. I դ. տեղի է ունենում նրա անկումը և հանդիպում են միայն հատուկենտ նմուշներ, այն էլ նախկին շուքը կորցրած։

Արտաշատում հայտնաբերված գունազարդ խեցեղենը պատկանում է հելլենիստական դարաշրջանին։ Գունազարդ խեցեղենի արտադրությունը Հայաստանում այս դարաշրջանում մի նշանավոր երևույթ էր հայ մշակույթի, մասնավորաբար կիրառական արվեստի պատմության մեջ։

Զարդաձևերը գերազանցապես երկրաչափական են, բայց երևան են գալիս մեծ բազմազանությամբ։ Տիրապետողը շրջան կազմող գոտիներն են, համակենտրոն շրջանակները, շառավիղները, ալիքաձև զարդերը, աղեղները, կետաշարքերով կազմվող զարդերը (նկ. 19)։ Ուշագրավ են և բուսական զարդերը, որոնք երևան են գալիս ճյուղերի տերևների, պսակաթերթերի և վարդյակների ձևով, հաճախ երկրաչափականին մոտեցող ոճավորմամբ։ Բազմազան են նաև անոթների մակերեսի (ֆոնի), ինչպես և զարդերի գույները։ Հանդիպում են սև, բաց գույնի, կարմիր, վարդագույն, շագանակագույն, թուխ շագանակագույն, դարչնագույն, դեղին, նարնջագույն, երկնագույն և այլ երանգներ, սակայն տիրապետողը կարմիրը, սևը և շագանակագույնն են, իրենց տարբեր երանգավորումներով։

Հարց է ծագում՝ ի՞նչպես առաջացավ և զարգացավ Հայաստանի հելլենիստական դարաշրջանի գունազարդ խեցեղենը, ո՞րտեղ պետք է որոնել նրա ակունքները։ Վերևում ասվեց, որ գունազարդ խեցեղենը Հայաստանում անցել է զարգացման շատ երկար ուղի և ինչ խոսք, որ տեղական դարավոր ավանդույթները զգալի դեր են խաղացել նաև հելլենիստական դարաշրջանի գունազարդ խեցեղենի առաջացման և զարգացման գործում, բայց հարկ է նշել, որ, եթե առաջին հազարամյակի առաջին կեսում այդ ավանդույթները Հայաստանում թուլացել, նվազել էին, ապա Իրանում, Մերձավոր Արևելքում, Միջերկրական ծովի ավազանում, մանավանդ այդ ծովի արևելյան ափերին և Փոքր Ասիայում գունազարդ խեցեղենը շարունակում էր զարգանալ[17] առաջացնելով անոթների ու նրանց գունավոր զարդերի նորանոր ձևեր ու մոտիվ-

---

[16] Г. А Тиранян, О расписной керамике древней Армении, «Պատմա-բանասիրական հանդես» № 3, 1965, էջ 265, 280; Ժ. Գ. Խաչատրյան, Հայաստանում գտնված գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ, «Պատմա-բանասիրական հանդես» № 1, 1966, էջ 253—260։

[17] *Chirshman., R.* Village Perse achéménide, Paris, 1954; Van den Berghe, Archeologie de l'Iran ancien, Leiden, 1959; *E. Schmidt*, Persepolis II, Chicago, 1957; *H. H. von-der Osten, E. Schmidt*- The Alishar Hüyuk (Season of 1930—1932); *E. Akurgal*, Phrygische, Kunst, Ankara, 1956; Gordion, Ergebnisse der Ausgrabung im Jahre, 1900, Berlin, 1904; *M. A. Hanfman*, Sardis und Lydien, Mainz, 1960; Istanbul Mitteilungen, Heft 9/10, 1950/1960, Istanbul, 1960; Heftt, 16, Istanbul, 1966; Excavations at Gözlu Kule, vol. I, The Hellenistic and Roman periods, Princeton, 1950, vol. III; The Iron age, Princeton, 1960; *N. C., Debevoise*, Parthian pottery from Seleucia on the Tigris, Universitet of the Michigan, 1934.

ները, որոնք իրենց ուրույն ոճն ու կերպարները ստացան մանավանդ III—I դդ. հելլենիստական դարաշրջանում։ Հայաստանը կտրված չէր հարևան երկրներից և անմասն չմնաց այդ զարգացումից։ Նա հաղորդակից և մասնակից եղավ Մերձավոր Արևելքի, Միջերկրական ծովի արևելյան ավազանի, Փոքր Ասիայի այս դարաշրջանի արևելյան և հոնիական-հելլենիստական մշակույթի զարգացմանը, շատ բան ընկալեց, յուրացրեց այդ միջավայրից և զարգացրեց իր սեփական մշակույթը։ Այս ճանապարհով զարգացավ, մասնավորապես գունավոր խեցեղենի արտադրությունը Հայաստանում մ.թ. VI—I դդ.։

Հելլենիստական դարաշրջանին բնորոշ են գեղեցիկի զգացողությունը, ամեն ինչի մեջ գեղեցիկը որոնելու և գտնելու ձգտումը։ Դա իր դրսևորումն է գտել նաև խեցեգործության մեջ։ Հիրավի, մշակվել են անոթների կատարյալ և գեղեցիկ ձևեր, ակնահաճո ձևավորում և տեսք է տրվել նրանց մանրամասներին՝ վզերին, շուրթերին, կանթերին, հատակներին։ Այդ դարաշրջանում մշակվել և հելլենիստական աշխարհի տարբեր երկրներում լայն կիրառություն են ստացել իրենց յուրահատկություններով հանդերձ կավանոթների մի շարք տեսակներ և ձևեր, որոնց հնում (մասամբ և հետագայում) տրվել են որոշակի անուններ, ինչպես օրինակ, ամֆորա, երկու ուղղահայաց մեծ կանթով ոչ շատ լայնաբերան անոթները (փոքրերը՝ ամֆորիսկ), օյնախոյա, միկանթանի երեքնուկի պես կամ այլ կերպ ձևավորված շրթերով սափորիկ, թասերի մեջ գինի լցնելու համար, կրատեր, լայնաբերան երկկանթանի անոթ, որն օգտագործում էին խնջույքի ժամանակ գինի լցնելու համար (հնում գինին խմում էին ջրի հետ խառնելով և այս «խառնելու» գործողությունից էլ առաջացել է կրատեր անունը)։ Գինի խմելու և ծիսական նպատակներով օգտագործվել են նրբախեցի թասեր, որոնք կոչվել են ֆիալա։ Ջուկ մատուցելու համար օգտագործվել է լայն հարթ մակերեսով ափսե։ Երկար, համարյա գլանաձև, անկանթ կարճ վզով անոթները կոչվել են ալաբաստր։ Իլիկանման կավե սրվակներին տրվել է ունգվետարիում անունը, թանձր անդորով պատած և համակենտրոն շրջանաձև գծերով զարդարված ափսեները կոչվել են տերրա սիգիլատա, իսկ մի կամ երկու կողմից տափակ ջրի անոթներն անվանել են տափաշիշ (фляга)։

Մենք հիշատակեցինք անոթների այս տեսակները նախ այն պատճառով, որ դրանք շատ բնորոշ են հունա-հելլենիստական աշխարհի խեցեգործությանը, ունեցել են լայն տարածում և երկրորդ՝ որ դրանց բազմաթիվ նմուշները գտնվել են Հայաստանում Արմավիրի, Գառնիի, Արտաշատի պեղումների ժամանակ և որ կարևորն է Հայաստանում գտնվածները արտադրվել են տեղում, ուստի բազմազան այլ փաստերի հետ միասին նշանավորում են հելլենիստական մշակույթի առաջացումը և զարգացումը Հայաստանում։

Բացի հելլենիստական բնույթի տեղական խեցեղենից Արտաշատում հայտնաբերվել են զգալի քանակությամբ կավե անոթներ, որոնք իրենց տեսակներով ձևերով և առանձնահատկություններով կապվում են զուտ տեղական հիավուրց խեցեղենի ավանդական ձևերի, մշակման եղանակների ու առանձնահատկությունների հետ, իհարկե փոխակերպելով և զարգացնելով դրանք։ Այդպիսին են մասնավորապես զանազան տաշտերը, պնակները, թասերը, զավաթները, կճուճները, սափորները, պուլիկները, ճրագները, խնոցիները, ամանների խփերը և այլն։ Ծորակավոր անոթները իրենց նախատիպերն ունեն հին արևելյան խեցեգործության մեջ, իսկ երկնագույն-մոխրավուն ջնարակով պատած անոթները, պնակներն ու թասերը, որոնց բազմաթիվ բեկորներ գտնվել են Արտաշատում ավելի մոտ են իրանական ջնարակած խեցեղենին, որը նշանակալից զարգացում ունեցավ, ինչպես Աքեմենյան (VI—IV դդ.), նույնպես և պարթևական (III դ. մ. թ. ա.—III դ. մ. թ.) թագավորությունների դարաշրջաններում։

Արտաշատում հայտնաբերվել են զգալի քանակությամբ հին դարաշրջանի դամբարաններ, որոնց մեջ ևս երևան են եկել բազմաթիվ ու բազմազան կավե անոթներ՝ ուշագրավ ձևերով

և մշակման առանձնահատկություններով։ Ծծանրանալով դրանց վրա, հարկ ենք համարում նշել մի հանգամանք՝ թաղումները հաճախ կատարված են կավե թրծած կարասների և դագաղների կամ սարկոֆագների մեջ։

Արտաշատի կարասային թաղումները վերաբերում են նախքան մ. թ. II-ից մ. թ. I դդ., իսկ կավե սարկոֆագով թաղումները՝ մ. թ. I—III դդ.։ Սարկոֆագներ Հայաստանում բացվել են հին Վաղարշապատի դամբարանադաշտում, որոնք ունեն սովորական դագաղի և կրկնակոշիկի ձև։ Արտաշատում բացվածները պատկանում են երկարուկ, ոտքերի կողմում նեղացող դագաղների սովորական տիպին, բայց այստեղ երևան են եկել նաև մանկական փոքրիկ, ձվածիր, կողերը դեպի դուրս լայնացող տաշտաձև (վանայի ձևի) սարկոֆագներ, որոնց նմանները հանդիպում են Իրանի, ինչպես և Ադրբեջանի անտիկ դարաշրջանի դամբարանադաշտերում։

ԿԱՎԵ ԱՐՁԱՆԻԿՆԵՐ

Հունա-հելլենիստական աշխարհում բարձր զարգացման հասավ և լայն տարածում գտավ նաև կորոպլաստիկայի՝ կավե կամ տերակոտային արձանիկների պատրաստման արվեստը։ Արձանիկները պատրաստվում էին կավե կաղապարների մեջ և թրծվելուց հետո սովորաբար ներկվում էին վարդագույն, կապույտ և այլ երանգներով։ Դրանք աստվածությունների, մարդկանց և կենդանիների անհատական և խմբաբավական արձանիկներ էին[18]։

Կավե արձանիկները կիրառական արվեստի բավականին ուշագրավ գործեր լինելով, միաժամանակ ունեին պաշտամունքային, ծիսական և կենցաղային նշանակություն, պահվում էին տներում, նվիրաբերվում էին տաճարներին, սրբատեղիներին, դրվում էին հանգուցյալների դամբարաններում և այլն։

[18] *F. Winter*, Die antike Terrakoten, Bd. I—III, Berlin, 1903.

Հայաստանում կենդանիների և կանանց կավե արձանիկներ (առանց կաղապարի օգտագործման) պատրաստվել են դեռևս հնագույն ժամանակներում (III հազարամյակ), բայց դրանք անմիջական կապ չունեն անտիկ դարաշրջանի արձանիկների հետ, որոնք պատրաստման եղանակով, տիպով, ոճով նաև նշանակությամբ ըստ ամենայնի բնորոշ են հունա-հելլենիստական աշխարհի մշակույթին։ Մինչև Արտաշատի պեղումները, հելլենիստական բնույթի մի քանի արձանիկներ էին գտնվել Հայաստանում, որոնցից երեքը բերված են դրսից ու միայն չորսը ունեն տեղական ծագում և գտնվել են Արմավիրում, Գառնիում, Սպիտակի շրջանում։ Արտաշատում քաղաքի և դամբարանների պեղումների ժամանակ հայտնաբերվել են մի քանի տասնյակ կավե արձանիկներ և նրանց բեկորները։ Դրանք բոլորն էլ պատրաստվել են տեղում, որ երևում է ոչ միայն նրանց ոճական առանձնահատկություններից, այլև օգտագործված կավից, որը նույնական է տեղական խեցեղենի մյուս տեսակների կավի հետ։

Արտաշատի տերակոտային արձանիկները հունական-արևմտյան օրինակների կատարելությունը չունեն, սակայն լցրի են ընկնում տեղական առանձնահատկություններով և ինքնատիպությամբ։ Արտաշատի համար ամենասովորականը կանացի արձանիկներն են, իսկ վերջիններիս թվում մոր և մանկան արձանիկները, յուրօրինակ հորինվածքով։ Մայրը նստած է գահույքի վրա, գլխին գցած քողը իջնում է մեջքին, իսկ մերկ մանուկը կանգնած է, հենված մոր կրծքին՝ մեջքով դեպի դիտողը (նկ. 20)։ Հետաքրքրական է, որ միայն այդպիսին է Սպիտակի շրջանում գտնված արձանիկը, որը կարող էր և մայրաքաղաքից տարված լինել։

Մանուկը գրկած կանացի արձանիկները սովորական են եղել հելլենիստական աշխարհի շատ երկրներում։ Այդպես են պատկերվել փոքր ասիական Կիբելա աստվածուհին, հունական Աֆրոդիտեն, Արտեմիսը, նաև Անահիտը, որի պաշտամունքը տարածված է եղել բացի Հայաստանից նաև Իրա-

նում՝ Մարաստանում։ Արտաշատի արձանիկները թերևս պատկերում են հայկական Անահիտին և ուշագրավ են իրենց ինքնատիպությամբ։

Մի այլ արձանիկ, որից միայն իրանն է պահպանվել, պատկերում է մերկ կնոջ, որը նվագում է կրծքին հենված լարային գործիքը՝ վին կամ ջնար (նկ. 21)։

Ուշագրավ է, որ նման կավե արձանիկներ գտնվել են Միջագետքի հելլենիստական դարաշրջանի Սելևկիա քաղաքում[19]։

Կանացի այլ արձանիկներ ևս գտնվել են Արտաշատում։ Բոլորն էլ ունեն տեղական բնորոշ առանձնահատկություններ։

Արտաշատում գտնվել են նաև տղամարդկանց, զինվորների արձանիկներ։ Իրենց արվեստով, ոճավորմամբ ավելի աչքի են ընկնում հեծյալների արձանիկները։ Ձիերը պատկերված են քառատրոփ վազքով կամ ծառս եղած վիճակում (նկ. 22)։ Վարպետները պատկերել են հեծյալի քամուց ծածանվող թիկնոցը, ձիասարքի, փոկերի վրա ամրացված մետաղի շրջանակաձև զարդերը։ Ամբողջական պահպանված հեծյալների արձանիկներ դեռևս չեն գտնվել և պարզ չէ, նրանք բացի կոնաձև գլխարկից սաղավա՞րտ, կամ այլ հարդարանք են կրել իրենց գլխին, սակայն վերին աստիճանի ուշագրավ է պատկերված հայ հեծյալ զինվորի զգեստավորումը։

Արտաշատում գտնված կավե արձանիկներից լավ պահպանված մի ծերուկի՝ հունական առասպելության մի հայտնի Սատիրի արձանիկը (նկ. 23)։ Այն պատկերված է հունական դասական արձանիկների ոճով, նստած, մի ձեռքով գրկած գինու տակառ կամ տակառը. պատրաստված է տեղում, Արտաշատի կավից և ներկված է եղել բաց վարդագույն ներկով, որի հետքերը նկատելի են։

Պետք է ենթադրել, որ այդ արձանիկը պատրաստված կամ արևմուտքից բերված կաղապարով, կամ էլ այդպիսի արձանիկից տեղում հանած կաղապարով։ Ինչևէ այդ արձանիկը համապատասխանել է Արտաշատի բնակիչների, մանավանդ հարևան երկրներից Հայաստանի քաղաքները, դրանց թվում և Արտաշատ վերաբնակեցված քաղաքացիների պահանջներին և հաշակին։

Արտաշատում գտնված կավե արձանիկները, բացի Սատիրի արձանիկից, աչքի են ընկնում գեղարվեստական ցայտուն ինքնատիպությամբ և հին հայկական կերպարական արվեստի շատ ուշագրավ գործերն են։

Ինչ վերաբերում է Արտաշատում գտնված կավե արձանիկների ժամանակին, ապա կարելի է ասել, որ նրանք երևան են գալիս I—III դարերի շերտերում նույն դարերի խեցեղենի և հնագիտական այլ նյութերի հետ միասին։ Հատկանշական է, որ № 1 բլրի վրա, որտեղ կյանքը ընդհատվել է մ. թ. 59 թ., հռոմեացիների կողմից քաղաքի ավերման հետևանքով, ոչ մի կավե արձանիկ չգտնվեց։

ԱՊԱԿԻ

Անտիկ դարաշրջանի ապակեղեն զգալի քանակությամբ հայտնաբերվել է Գառնիում, հին Վաղարշապատում և Սովետական Հայաստանի մի քանի այլ հնավայրերում[20]։ Արտաշատում երևան եկած ապակեղենի քանակը դեռևս մեծ չէ։ Արտաշատի № 1 բլրի վրա հայտնաբերվել են ապակյա թասերի բեկորներ կապույտ, բաց երկնագույն, դեղին և շագանակագույն երանգների։ Դրանք պատրաստվել են դրոշմելու եղանակով, հավանաբար տեղում, ուստի և ինքնատիպ են։ Փչելու եղանակով պատրաստված ապակու հետքեր այս բլրի վրա երևան չեն եկել և դա միանգամայն հասկանալի է,

[19] W. Ingen, Figurines from Seleucia on the Tigris, London 1939. Catalague № 546, 555, տպ. XXXVIII, 275, 278. Այս գրքում բերված են նաև մոր և մանկան, ինչպես և հեծյալների զգալի թվով արձանիկներ։

[20] Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Գ. Խաչատրյան, Հին Հայաստանի ապակին, Երևան, 1969։

քանի որ ապակեղենը փչելու եղանակով պատրաստելը, որն ապակեգործության մեջ հեղաշրջիչ նշանակություն ունեցավ, հին աշխարհում առաջ է եկել հին և նոր թվագրությունների սահմանագլխին կամ մ. թ. I դ. սկզբներին, իսկ № 1 բլրի վրա կյանքը ընդհատվել է դրանից քիչ հետո՝ նույն առաջին դարում։ Այստեղ գտնվել է նաև ապակենման վառ կարմիր զանգվածից պատրաստված գդալ, վրան փորագրված է արամեերեն արձանագրություն, որը սակայն թերի է և դժվար ընթեռնելի։ Ուշագրավ են նաև հաստ պատերով գունազարդ ապակու բեկորները, որոնք զարդարված են նաև շերտի տակ արված ոսկեզօծումով։

V—III դ. մ. թ. ա. Իրանում, Փոքր Ասիայում և հարևան երկրներում տարածված են եղել այսպես կոչված բազմանիստ կնիքները, որոնց վրա փորագրված են լինում հեծյալ և հետիոտն զինվորների մենամարտի և այլ տեսարաններ, ձիերի, կենդանիների ու գազանների պատկերներ[21]։

Բազմանիստ կնիքների վաղ օրինակները V—IV դ. մ. թ. ա. պատրաստվել են քարից, մեծ մասամբ լազուրիտից, շուտով նաև ապակուց, որին տրվել է նույն կապույտ գույնը։ Նման կնիքներ Հայաստանում ևս գտնվել են [22], մի օրինակն էլ մուգ կապույտ ապակուց գտնվեց Արտաշատում՝ նույն № 1 բլրի սենյակներից մեկում և վրան փորագրված է ձիու պատկեր։ Այդ կնիքը ոչ ուշ քան մ. թ. ա. II դ. գործ է և հավանաբար պատրաստվել է տեղում։

№7 և № 8 բլուրների վրա, որտեղ կյանքը շարունակվել է նաև հետագայում՝ մինչև մ. թ. ա. IV դ., ինչպես և I—III դդ. դամբարաններում փչելու եղանակով պատրաստված ապակեղեն արդեն հայտնաբերվում է։

Արտաշատում գտնված ապակեղենի քանակը դեռևս փոքր է, բայց նրա մեջ կան ինչպես ներմուծված սիրիական ապակյա սրվակներ, անգամ փյունիկյան կոչված սրվակի բեկոր, նույնպես և տեղական արտադրության սրվակներ։

Հայաստանում ապակեգործական արհեստանոցներ դեռևս չեն հայտնաբերվել, բայց հույս ունենք, որ Արտաշատի հետագա պեղումները կլրացնեն այդ բացը։

Ինչպես ամենուրեք, նույնպես և Արտաշատում անտիկ դարաշրջանի դամբարաններում հայտնաբերվում են ապակենման զանգվածից և ապակուց պատրաստված ուլունքներ։ Նշենք, որ ապակյա ուլունքների պատրաստումը շատ հին երևույթ է, քան ապակյա անոթների արտադրությունը։ Ապակյա ուլունքներ Հայաստանում գտնվել են դեռևս նախքան մ. թ. II հազարամյակի սկզբների դամբարաններից։

Արտաշատի պեղումների ժամանակ գտնվել է նաև մի հետաքրքիր իր։ Դա բավականաչափ խոշոր աչք է, համարյա մանկան աչքի չափ, որի կենտրոնական շրջանակը (բիբը) պատրաստված է ապակուց, իսկ սպիտակուցը մարմարից։ Հնարավոր չէ որոշակի ասել, թե դա առանձին պատրաստված աչք է եղել դուստ հմայական նշանակությամբ, թէ՞ արձանի վրա դրված աչք, քանի որ դնովի աչքեր լինում էին։

ՈՍԿՐԵ ԻՐԵՐ

Ոսկորը հնագույն ժամանակներից օգտագործվել է ինչպես գործիքներ, նույնպես և կենցաղային իրեր ու զարդեր պատրաստելու համար։ Արտաշատում ոսկրե իրեր դեռևս քիչ են գտնվել։ Դրանց թվում կան կիսամշակ ոսկորներ, ոսկրից լավ մշակված խողովակ, դանակի կոթ, ինչպես և փղոսկրից պատրաստված գավաթի մի բեկոր։ Հավանաբար դրսից ներմուծվել է գավաթը պատրաստի վիճակում։

Հնում շատ սովորական են եղել վեգերը (ոչխարի և խոզի ճաներ), որոնք ավելի վաղ շրջաններում ունեցել են նաև հմայական նշանակություն, իսկ հետագայում ծառայել են կերազանցապես իբրև խաղալիք։

---

[21] *A. Furtwängler*, Die antiken Gemmen. Leipzig, Berlin, 1900, հ. I, ապ. XI, հ. III, էջ *116—123*։

[22] Ժ. Խաչատրյան, *Հայաստանում գտնված բազմանիստ կնիքները*, «*Պատմա-բանասիրական հանդես*» № *1, 1965*, էջ *271—277*։

Արտաշատում վեգերը (ճաներ) շատ հաճախակի են երևան գալիս և՛ շենքերում և՛ դամբարաններում։ Հետաքրքրական է, որ սենյակներից մեկում գտնվեց բրոնզից ձուլված մի վեգ։ Պետք է ենթադրել, որ անտիկ դարաշրջանում վեգերը դեռևս չէին կորցրել իրենց հմայական նշանակությունը։

ԴՐԱՄՆԵՐ

Քաջ հայտնի է, որ առևտրին և երկրի տնտեսական զարգացմանը նպաստելու համար Տիգրան Բ և նրա հաջորդները[23] կտրել են արծաթե և պղնձե կամ բրոնզե դրամներ[24]։ Տիգրանի օրոք դրամներ կտրվել են Արտաշատում, Տիգրանակերտում նաև բուն Հայաստանից դուրս՝ նրա ընդարձակ պետության այլ քաղաքներում, մասնավորապես Ասորիքի (Սիրիայի) մայրաքաղաք Անտիոքում, Դամասկոսում, թերևս նաև Հյուսիսային Միջագետքի Մծբին քաղաքում։ Մի քանի քաղաքներում դրամ հատելու փաստն ինքնին վկայում է, որ Տիգրան Բ թողարկել է զգալի քանակությամբ դրամներ, որոնք շրջանառության մեջ են գտնվել նրա ընդարձակ պետության մեջ ինչպես և հարևան երկրներում, որտեղ ևս նրա դրամները գտնվել են։

Արտաշատը, իբրև մայրաքաղաք, հին Հայաստանի դրամահատության գլխավոր կենտրոններից մեկն էր Տիգրան Բ-ի օրոք (95—56 թթ.), իսկ հետագայում, երբ ընդհարվելով Հռոմի հետ Տիգրանը կորցրեց իր նվաճած երկրները, մանավանդ նրա հաջորդների օրոք, դրամներ կտրվում էին գերազանցապես Արտաշատում։

Արտաշատի հնագիտական արշավախումբը ելնելով պատմական այդ իրողություններից հույս էր տածում, որ պեղումների ժամանակ կգտնվեն տեղում կտրված դրամներ, և երկար սպասելու հարկ չեղավ։ 1971 թ. պեղումների աշխատանքները կենտրոնացվեցին № 1 բլրի վրա և չորրորդ օրը պարսպին հարող մի սենյակի ներսի պատի տակ մոտ 1/4 քառակուսի մետր տարածության վրա գտնվեց դրամական գանձ, թվով 28 դրամ և պարզվեց, որ բոլորն էլ Տիգրան Բ-ի դրամներն են՝ մեկը մեծ քառադրամ, մյուսները փոքր դրամներ, բոլորի վրա էլ դրոշմված է մի երեսին թագավորի դիմանկարը (նկ. 24, 25), իսկ մյուս երեսին՝ Անահիտի հետ նույնացված սիրիական Տիխե աստվածուհու պատկերն է գետի ափին, ժայռի վրա նստած ձեռքին դափնու ճյուղ, ոտքերից ներքև գետի աստծու պատկերը։ Այդ դրամները կտրվել են Արտաշատում, Տիգրանակերտում՝ «Արքայից արքայի Տիգրանի», իսկ Անտիոքում կտրվածքների վրա «Արքայի Տիգրանի» հունարեն մակագրություններով։

Հետագա պեղումները ցույց տվեցին, որ այն սենյակը, որի մեջ գտնվեց Տիգրան Բ-ի դրամների գանձը, եղել է դարբին-զինագործի արհեստանոց։

Այն հանգամանքը, որ գտնված գանձի դրամները կտրվել են տարբեր քաղաքների փողերանոցներում ցույց է տալիս, որ այդ դրամները եղել են շրջանառության մեջ։ Մյուս կողմից գանձը միատարր է, այսինքն՝ բաղկացած է միայն Տիգրան Բ-ի դրամներից, որեմն կուտակվել է շատ կարճ ժամանակամիջոցում, թերևս զինագործի արտադրանքի համար կատարված վճարում է, գուցե և այլ են եղել գանձի այստեղ գտնվելու հանգամանքները՝ ի՞նչ իմանաս։

Արտաշատում գտնվել են նաև Տիգրան Բ-ի և Արտավազդ Բ-ի (55—34 թթ.) պղնձե դրամները, որոնք շրջանառության մեջ էին գտնվում երկրի ներքին շուկայում։ Դրանք կտրված են տեղում՝ Արտաշատում և Արտավազդ Բ-ի դրամի վրա պարզ երևում է հունարեն A տառը, որը, հավանաբար, Արտաշատի փողերանոցի նշանն է։

Արտաշատը մ. թ. 183 թ. կտրել է նաև սեփական՝ քա-

[23] Ենթադրվում է, որ պղնձե դրամներ կտրել է նաև Տիգրան Ա-ն։

[24] Տիգրան Բ-ն թողարկե՞լ է արդյոք նաև ոսկե դրամներ, թե ոչ՝ դեռևս մնում է առեղծված, քանի որ նրա պատկերով ոսկյա դրամները համարվում են կեղծված։ Առեղծվածը լուծելու համար նոր փաստեր են հարկավոր։

զաքային դրամ, որի մի երեսին Տիխե-Անահիտի պատկերն է, իսկ մյուս երեսին՝ հաղթանակի աստվածուհի Նիկեի, շուրջը գետեղված ΑΡΤΑΞΙCΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩC-Արտաշատ, մետրոպոլիս (մայրաքաղաք) հունարեն մակագրությունը։ Այդ դրամը գտնվել է պեղումներից շատ առաջ և պահվում է Հայաստանի պետական պատմական թանգարանում (նկ. 1)։

Արտաշատը առևտրական լայն կապեր է ունեցել տարբեր երկրների հետ ուրեմն այստեղ շրջանառության մեջ պետք է լինեին նաև այլ երկրների դրամներ։ Եվ ահա, պեղումների ժամանակ դրանք երևան են գալիս։

Առաջինը գտնվեց Տիգրան Բ-ի աներ՝ Պոնտոսի Միհրդատ VI թագավորի (132—63 թթ.) պղնձե դրամը, կտրված Ամիսոս քաղաքում։ Այնուհետև երևան եկան Հռոմեական վաղ կայսրության շրջանի (I դ. մ. թ.) պղնձե դրամներ սելևկյան Անտիոքոս Էվերգետի (138—129 թթ.) արծաթե դրամը։ Դրամների հայտնաբերման առումով ավելի արդյունավետ եղան 1972 թ. աշնանը № 1 բլրի վրա կատարվող պեղումները։ Վերևում հիշատակված այն սենյակում, որտեղ դրված են եղել նավթով (մազութով) լցված կարասներ, գտնվեց 39 դրամ։ Դրանցից երեքը 20—60 սմ խորությունից, 34-ը 1—1,30 մ խորությունից՝ հատակին թափված նավթի շերտի տակից և երկուսը 1,50 մ. խորությունից։ Կարելի է ասել, այս դրամները, առնվազն դրանցից 34-ը, գտնվեցին գանձի ձևով։ Արդյոք դրանք նավթի վաճառքից են գոյացել, որոշակի ասել դժվար է, բայց չի բացառվում։

Դրամներից երկուսը պղնձից է՝ մեկը գտնվեց համարյա մակերեսից 0,20 սմ խորությունից և հռոմեական Օգոստոս կայսեր անունով կտրված դրամ է, իսկ մյուսը՝ 1,10 խորությունից գտնվեց և հավանաբար նույնպես հռոմեական դրամ է (շատ է մաշված)։ 37 արծաթյա դրամներից 16-ը Ասորիքի (Սիրիայի) Սելևկյանների կտրած դրամներն են, 13-ը՝ Կապադովկիայի (որը Հայաստանի արևմտյան հարևանն էր) դրամներ են, 6-ը՝ Իրանի պարթևական թագավորների կտրածներն են, մեկը՝ Ալեքսանդր Մակեդոնացու դրամի տեղական անհայտ նմանեցումն է և մեկը աթենական դրամ է։ Դրանք ժամանակով վերաբերում են մ. թ. ա. II—I դդ. և միայն մեկ կամ երկու դրամ ավելի վաղ ժամանակի են (մ. թ. ա. III դ. վերջերին)։

Հարևան և հեռավոր վեց երկրներում կտրված դրամների հայտնաբերումը պեղումների առաջին տարիներին ինքնին պերճախոս փաստ է, որը նշանավորում է Արտաշատի առևտրա-տնտեսական խոշոր կենտրոն լինելը։ Հելլենիստական աշխարհի երկրների հետ Արտաշատի ընդարձակ կապերն են արտահայտում նաև պեղումների ժամանակ հայտնաբերված ներմուծված առարկաները։ Դրանց թվում կան Սիրիական ապակեղեն, փոքրասիական և հռոմեական խեցեղեն, միջերկրականի արևելյան գավառներից բերված արծաթյա գեղարվեստական իրեր, մարմարե անոթներ, վերջապես մարմարե արձաններ և այլն։

Արարատյան դաշտը, որտեղ գտնվում էր Արտաշատը, իր բարեբեր հողերով, այգեստաններով ապահովում էր այդ մեծ քաղաքի բնակչությանը ամեն բարիքով, մանավանդ Արտաշատը շրջապատված էր ագարակներով։ Միայն գյուղատնտեսական-արտադրության առումով իսկ Արտաշատը տնտեսական մեծ նշանակություն ուներ, իսկ պեղումները, թեև նոր սկսված, ցույց են տալիս որ նա միաժամանակ արհեստագործական և առևտրի խոշոր կենտրոն էր։

Մի կողմ թողնելով տրամաբանական ակնհայտ ճշմարտությունները այն մասին, որ Արտաշատում եղել են այնպիսի արհեստներ, ինչպիսին են ոստայնակության (ջուլհակության), կաշեգործության, կոշկակարության և նման բազմաթիվ արհեստներ, միայն պեղումներով հայտնաբերված նյութերը հավաստում են մի շարք արհեստների առկայությունը Արտաշատում։

Շինարարական աշխատանքների հետ էին կապված բարկոփությունը, քանդակագործությունը, աղյուսագործությունը, որմնադիրությունը, շինարարական խեցեղենի (կղմինդրի ջրմուղի կավե փողրիկների) արտադրությունը,

կրագործությունը, ավաղարարությունը (ոչ միայն կավով այլև կրով, կավճով), որմնանկարչությունը, որն այն ժամանակ արհեստ էր համարվում։ Մետաղագործական արհեստներից զարգացած էին դարբնությունը, զինագործությունը, պղնձագործությունը, ոսկերչությունը (ոսկյա և արծաթյա իրերի զարդերի պատրաստումը)։ Ոսկերչության հետ կապված մասամբ և ինքնուրույն արհեստ էր ակնագործությունը, քանի որ ակնագործները ոչ միայն ոսկյա և արծաթյա իրերը զարդարում էին ակնեղենով, այլև պատրաստում էին փորագիր պատկերներով կնիքներ, ուլունքներ ճարմանդներ և այլ առարկաներ ու զարդեր։ Շատ զարգացած արհեստ էր կավագործությունը կամ խեցեգործությունը, ամեն տեսակի՝ սովորական, կամ փայլեցրած, նկարազարդված անոթների արտադրությունը։ Հազիվ թե սովորական, գունազարդ, խեցեղեն, ջնարակած (գլազուրած) անոթներ, ինչպես և կավե արձանիկներ արտադրողները միևնույն վարպետները լինեին. ամենայն հավանականությամբ, դրանք կավագործական արհեստի առանձին ճյուղեր էին։

Հայաստանում առաջացել էր ապակեգործությունը և մինչև առաջին դարը ապակեղենը պատրաստվում էր կաղապարի մեջ դրոշմելու և այլ հին եղանակներով, իսկ I դարից սկսած ապակեղենը պատրաստվում էր փչելու եղանակով՝ կաղապարի մեջ կամ առանց կաղապարի։ Արտաշատում գտնված ինչպես հին, նույնպես և փչելու եղանակներով, պատրաստված տեղական ապակեղենը վկայում է, որ ապակեգործությունը նույնպես զարգացած է եղել այստեղ։ Նկարազարդ խեցեղենի և որմնանկարների բազմագույն գույներն ու երանգները վկայում են նաև ներկագործական արհեստի, իսկ մշակված փայտի և ոսկորի մնացորդները՝ հյուսնության և ոսկորի մշակման հետ կապված արհեստների առկայության մասին։ Արտաշատում գտնված արվեստի ստեղծագործությունները նույնպես պերճախոս են։

Ամփոփելով մեր խոսքը կամենում ենք ընդգծել, որ Արտաշատը եղել է հին Հայաստանի ամենանշանավոր քաղաքը։ Իբրև քաղաքամայր խաղալով երկրի վարչա-քաղաքական գլխավոր կենտրոնի դերը, նա նույնքան նշանավոր է եղել իբրև խոշորագույն տնտեսական՝ առևտրա-արհեստագործական կենտրոն։ Արտաշատը եղել է նաև հայ մշակույթի և արվեստի գլխավոր օջախը։

Արտաշատի պեղումները, որ սկսվել են 1970 թ. և շարունակվելու են երկար տասնամյակներ, անտարակույս կբացահայտեն հին Հայաստանի և նրա մշակույթի պատմության շատ անհայտ եղելություններն ու երևույթները։

ՆԿԱՐՆԵՐ

1. Արտաշատ մայրաքաղաքի դրամը, Տիխե-Անահիտի պատկերով, կտրված 183 թ. մ. թ.:

Նկ. 3. Պարապի մնացորդների մի հատված, կառուցված խոշոր վեմերով։

Նկ. 5. № 1 տուն մեր դեմ բացված վիճակագրության։

Նկ. 4. № 1 տուն վրա բացված դեպքերի կատարման համար։

Նկ. 7. Ն 8 բլուր մի կող կամարակապ դամբարանի մուտքի մոտ գտնված մեկ դամբարան, դիտված հարավ-արևելքից

Նկ. 6. Ն 8 բլուր մի կող կամարակապ դամբարանների առանձնահատակագիր

Նկ. 8. Սյան խարիսխներ, կրաքարից։





Նկ. 9. Սյուների գլաններ, կրաքարից։

Նկ. 10. Բաղիարի ռելիեֆներ։

Նկ. 11. Կանացի մարմարե արձան, II դ. վերջ—I դ. սկիզբ մ. թ. ա.։



Նկ. 12. Անտիկ երկանքի ներքևի քար, բազալտ։

Նկ. 13. Քարե վագր։



Նկ. 14. Քարայծի արձանիկ, արծաթից։



Նկ. 15. Անոթի արծաթե կանթ, վերին մասում սիրո աստված Ամուրի արձանիկը։



Նկ. 17. Անոթի բրոնզե կանթ, Հրեշի գլխով։



Նկ. 18. Ամրակ գմբեթի գմբեթամերձ (վերնիկամերձ) վերամասերի։



Նկ. 18. Ոսկյա պսակի տերևներ։





Նկ. 19. Գունազարդ խեցեղենի նմուշներ։

Նկ. 20. Տերակոտային արձանիկ, մոր և մանկան պատկերներով։



Նկ. 21. Տերակոտայից մարդ գլխի դիմագիծ ունեցող գլուխ։

Նկ. 22. Տերակոտային արձանիկ՝ Հեծյալ։

Նկ. 23. Տերակոտային արձանիկ՝ Սատիր։

Նկ. 24. Տիգրան II-ի մի քանի դրամներ, Արտաշատում գտնված գանձից, կտրված Արտաշատում, Տիգրանակերտում և Անտիոքում։

Նկ. 25. Տիգրան II-ի դիմանկարը, Արտաշատում կտրված դրամի վրա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արտաշատը մայրաքաղաք 5
Արտաշատի տեղանքը և տարածքը 11
Պարսպի և շենքերի հետքերը 13
Պաշտպանական միջոցներ 21
Մարմարե արձան 23
Քարե առարկաներ, սարքեր 25
Մետաղագործություն 29
Խեցեգործություն 31
Կավե արձանիկներ 38
Ապակի 41
Ոսկրե իրեր 43
Դրամներ 44
Նկարներ 51

ԲԱԲԿԵՆ ՆԻԿՈԼԱՅԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

БАБКЕН НИКОЛАЕВИЧ АРАКЕЛЯН

ՀԻՆ ԱՐՏԱՇԱՏ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
ճնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Մ. Ս. ՀԱՍՐԱԹՅԱՆ
Հրատարակչական խմբագիր՝ Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ
Նկարիչ՝ Հ. Ն. ԳՈՐՇԱԿԱԼՅԱՆ
Լուսանկարները՝ Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆԻ, Ռ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻ և
Գ. Կ. ԺԱՄԿՈՉՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՖ 04048 Պատվեր 637 Տպաքանակ 3000

Հանձնված է շարվածքի 20/XII 1974 թ., ստորագրված է տպագրության 23/IV 1975 թ., տպագր. 5,0 մամուլ, հրատ. 2,9 մամուլ, պայմ. 4,2 մամուլ, թուղթ № 1, 84×108 1/32:
Գինը 35 կոպ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան-19, Բարեկամության 24
Издательство АН Армянской ССР Ереван—19 Барекамутян 24
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան